ԿՈՒՆԿ

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻՆ

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ

Դ· ՏԱՐԻ· 1863· ԹԻՒ Է·

ՅՈՒԼԻՍ

ՀԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄԸ

Գ· Շ—ՅԻ· ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ ՀԱՆԱԾ

1842 թիւ· օգոստոսի 12 Մաղարթոյ Նա-
խավկայի վանքումը :

Շարունակութիւն*

Էս տեղաց վերադարձանք վանքն, ուր մին մին գաւառթ թէյ էինք խմած և ահա ներս մտաւ մին ալէզարդ ծերունի, հա-մարեա եօթանասուն ամաց, երեսն կնճռած, բայց կերպարանքն զուարթ և պարզ—յօնքերն և մօրուսն ճեպ ճերմակ ինչպէս ձիւն, հասակն երկար, բայց վոխտ, ձեռքին սև ապանողից գա-ւազան : Յարգութեամբ ողջունելով, հաշադրութեամբ երեսիս սկսեց նայել : Սա է, ասաց ինձ վանահայրն, Պողոս հայրն, ա-

* Տես կոնկան Դ· տարւոյն Զ· թուումը երես 460·

մենիցս ծեր և հին մեր վանքի միաբանն, որոյ մասին երեկն ձեզ ասուած էի թէ Ճգնաւորի խոստովանահայրն է: Վերկացայ ձեռքն համբուրելի և խնդրեցի նստել մօտս: Բարի ծերունին այնպէս մարդասիրութիւն ցոյց տուաւ ինձ, որպէս թէ քսան տարի է հեռս ծանօթ է, թէև ասաց, երեսդ չեմ տեսած, բայց ծնողացդ, եղբարցդ հետ մօտ ծանօթութիւն եմ ունեցել, և քո անունդ շատ լսած, ուրեմն իրաւունք ունիմ աւելի ևս մերձ ինձ, քեզ և քեզ, ինձ համարել: Քանի մի րոպէի զրուցից յետոյ, իմ խնդրանօք սկսեց պատմել, թէ ուրեմն ամեայ նուիրուած է եղած Մենաստանիս, քանի քանի տարուց յետոյ դնացել է սուրբ Էջմիածին, էն տեղու միաբան դառել, մեծ Մինաս արքեպիսկոպոս տեղապահի հետ շատ տեղանք նուիրակութիւն շրջել, երեսուն տարեկան եղած վերադարձել է վանքս և տեղոյս միաբանութեան կարգն կրկին մտել, ուր և կայ մինչ ցայսօր:

Ըստ որում ծերունւոյ խօսակցութիւնը շատ ճոռոմ, ուրախ էր, վասն որոյ և ես ամէն մին առարկայ բաց անելիս, հարցմունքով միջոց էի տալիս երկարօրէն և տեղն ի տեղն պատմէ: Ծերունւոյ հնութեանց տեղն ի տեղն ակամատես պատմութիւնները, այնքան քաղցր էին ինձ լսելոյ, որ ընթրիքն ուրինք, և մինչև կէս գիշեր միմիայն նա իւր խօսակցութեամբը մեզ զբաղեցրեց: Երկարօրէն ճառեց Սիմէօն կաթուղիկոսի վերջի տարիքը, Ղուկաս կաթուղիկոսի կեանքը, Յովսէփ անուանեալ կաթուղիկոսի յառաջանալը և նորա ներդործութիւնը—Դանիէլ և Դաւիթ կաթուղիկոսաց հակառակ աթոռ տարաձայնութիւնը—այնքան մեծ զումար դրամոց՝ նոցա մրսելը և կաշառք տալը Պարսիկ և Տաճիկ կողմնակալաց—նոցա մէկմէկու դուրս անելը աթոռից և բանտարկումը: Քանի քանի անգամ յառնելը Պարսից կամ Տաճկաց՝ անթիւ զօրք միմեանց վրայ Հայաստանի մէջն—աւերումը և քանդումը վանօրէից, քաղաքաց և գիւղօրէից և այլն և այլն: Ի վերջոյ խոստացաւ ինձ տալ—երբ իմացաւ հետաքրքիր իմ—չորս հարիւրաչափ կոնդակք ողջունագիրք կաթուղիկոսաց և երեւելի վարդապետաց—մահսերք բաղմակնիք, վկայականք և այլևայլ

դուրս կերթայ կվախչի ինչպէս այծեմն, կամ թէ այնքան մուրձն է նրա քարայրը, ուր քսան մարդ ծածկվի, անհնար է նրանց գտնելն :

Ես էլ ասեցի, կվազեմ յետնէն, կհասնիմ կբռնեմ, կազատեմ . . . . . .

Ո՛չ թէ դու, պատասխանեց հայրն, այլև այծենիք կործեմ, չեն կարող նրա յետնէն էն քարերի, էն քերցերի մէջը հասնել :

Հայր սուրբ ասեցի, մինչև չտեսնեմ միայնակեցին, քաւ լինի թէ գնամ ձեր վանքիցն—դարձեալ դու կիմանաս սրա հնարքն, խնդրում եմ, մին հնարք մտածես, որ կարողանամ նրա հետ գոնէ տասն րոպէաչափ խօսիմ կամ տեսութիւն տանեմ, այնուհետև ես գիտեմ—մտածէ՛ հայր սուրբ, մտածէ՛ հնարք :

Ակսեց Պօղոս հայրն փոքր ինչ մտածմանց մէջը մտնել, և ապա շարունակեց, որդի, ես սրտով կցանկամ ձեր խնդիրքը և բարի ցակութիւնը կատարել, բայց տեսնում եմ, անկարելի բան է առաջարկութիւնդ . . . ինչ հնարք մտածեմ, ես էլ չգիտեմ . . . . այսու ամենայնիւ կէս գիշեր է, ես էլ հանգըստանալ կուզեմ, շատ ճանապարհ եմ քալած ոտնով . . . գնանք, քնենք, տեսնենք Աստուած ինչ միտք և խելք է տալիս մեզ մինչև վաղն : Ասէց և ոտի կանգնեց :

Այնքան լինի, հայր սուրբ, ասացի, որ նրան ու ինձ երեսս երեսի կանգնացնես, այնուհետև ես գիտեմ ինչպէս կխօսեմ նորա հետը :

Ուրեմն, պատասխանեց Պօղոս հայրն, մին բանէ, կը փորձենք, կլինի շատ լաւ, թէ ոչ մին ճնաս չունինք : Առաւօտը շատ շուտով, ինչպէս որ լոյսը նոր բացվում լինի, վերկաց, կը գամ միասին գնանք—որովհետև հեռի է և դժուար կլանելի արեգակի ջերմութիւնիցը բարձր սարի գլուխն—ես էն տեղ կաշխատիմ մին կերպով թերևս միմեանց հանդիպիք, այնուհետև ինչպէս ասում ես, դու գիտես ինչ կանես արա : Բարի գիշեր ցանկանալով Պօղոս հայրը և միւսները, գնացին, և ես խակ և խակ պարկեցի քնանալ :

Առաւօտեան, Օգոստոսի 23 լուսն չբացուած Պօղոս հայրն

հատացնէին, եթէ միայնակեցի տեսութեան յոյսը ինձ չէր քաջալերած : Ամէն քայլումս ոտքերս սպրտավում էին, բոլոր լեռան անապատ, ամայի, բաց ի ոտնէրից քայլափոխնէրէն, և օդի հանգարտութենից արձագանգնէրէն, ուրիշ ձայն չէր լսվում, որք ահ-երկիւղ էին բերում ինձ էս անծանօթ ձորերումը : Կաքաւնէրը աջ--ահեակս լիքն կդկղում էին, և զանազան տեսակ ճնճղուկնէրն, որք ճռուեղելով վայրենի ,ելերի, ցանցաւ քարէրի ծայրէրին նստած էին, գեղեցիկ իմն տեսարան էին երևում աչքումս : Այժենիք երամ երամ, որ ինձ ոչընչի տեղ չէին հաշվում, աներկիւղ արձանացած աստ և անդ ինձ էին նայում--համարեա սիրտս ճաքվում էր, թէ ինչի՞ անհամբեր եմ ես եղած, և չեմ կարում գսպել ինձ, փոքր ինչ սպասել, կանգնել, շունչ առնել ու հրացանս ուղղել նոցա մինի վրայ ու ձգել : Մտքումս միայնակեաց և նրա քարայրը էի երևակայում—նրա հետ էի որպէս թէ խօսում—խօսքէր, առարկանէր էի ընարում նրան ասել, պատմել, համոզել հետս խօսայ գնել երկու բերան :

Քանի մի անգամ քերցերի վրայ նստեցայ, հանգստացայ բոպէաչափ և վերստին վերկացայ շարունակեցի ճանապարհս : Յամն ուժն էր, հաղիւ հազ կարողացայ հասնել մեծ յուսահատութեամբ նշանակեալ ժայռի մօտը, ուստի աչքերս դէն ձգեցի, և ոչ ոք չերևացաւ : Երկու անգամ հրացանս միմեանց վրայ դատարկեցի, լերան արձագանքն այնպէս թընդաց, որ և ես իմ հրացանիս ձայնէն սարսափեցայ : Մին էլ նայիմ, որ Պօղոս հայրը դուրս եկաւ մին քերցի վրայ կանգնեցաւ, և գլակը ձեռն առած, սկսաւ դէպ ինձ շարժել իւրեան ինձ ցոյց տալոյ և կանչելոյ համար դէպ առ ինքն դընալ : Ես էլ գլակով պատասխանելով նրան, ցոյց տուի թէ գալիս եմ : Էս քարից էն քարի վրայ թռչելով, վեր ընկնելով և կանգնելով, կէս ժամէն ուելի թերևս տևեց, ականջի ձէնի տեղ հէնց մօտեցայ, պատահեցայ մին ականակիտ աղբիւրի, որնոր կարծես թէ բնութիւնը բղխացնում է միայն ճգնաւորի համար, կաւացայ ձեռնէրս և երեսս լուանալ էն սառը ջրովը, Պօղոս հայրը վերստին դուրս եկաւ քարանցաւէն, կանգնեց մին քերցի վրայ, իսկ և իսկ երբ ինձ տեսաւ վայր իջաւ քարի

նաւոր հայր սուրբ, ասեցի, մի՞թէ էդքան հիւրատեաց պէտք է լինի մին միայնակեաց, ամենայն նահապետք և սուրբ հարք եկեղեցւոյ՝ հիւրընկալութեամբ են Աստուծոյ հաճոյացել և դու ուստից առիր օրինակդ--մի՞թէ Աստուծոյ հաճելի է էդպիսի ուխտադրութիւնը, որ առանց նպատակի է և ընդդէմ օրինաց Արարչին և մարդկութեան: Ինդրեմ խնդրեմ վերադարձիր տեղումդ պարկիր և մի՛ արտաքսեր քարանցաւէդ օտարականիս, որ շրջելով էսքան անմատչելի քարափնէրն, եկել է մտել էս տեղ և բազդաւորութեամբ քեզ է պատահել ու ցանկանում է միմիայն օրհնութիւնդ ժառանգել: Երկու բոպէաչափ որպէս մեք երկոքեանս, նոյնպէս և նա լուռ մնջիկ կենալուց յետոյ, վերառաւ միայնակեացը. օտարականդ բարի՛, սխալուում ես դու, առանց նպատակի չէ . . . . . ուխտիս նպատակն է տանջել մահկանացու մարմինս աշխարհին վայելչութենէս, և էս ոչընչով չէ կարելի կատարել, միայն թէ հեռանալով մահկանացուից և չունենալով նոցա հետը յարակցութիւն:

Ուրեմն, պատասխանեցի, Աստուած ամենազէտն ինչի՞ ստեղծեց մարդս ընկերութեամբ—ինձ պարտականութիւն չեմ համարում առարկայիս վրայ երկար խօսալը ձեզ հետ, միայն էսքան եմ համարձակվում ասելը, որ էդպիսի ուխտադրութիւնը ընդունելի չէ Աստուծոյ, և մանաւանդ հիւրատեաց լինելն աւելի է նորա պորմածութեանը:

Էսպիսի ուխտադրութիւնը, կրկնեց նա, սուրբ է առաջի Աստուծոյ, առաջի հրեշտակաց նորա, առաջի ամենայն սրբոց նորա և առաջի ամենայն մարդկան--քա՛ լեցի թէ ես, ես հիւրատեաց լինիմ--հիւր ես դու Աստուծոյ և ոչ իմն: Դո՛ւ . . . . . դո՛ւ, բարեկա՛մ, թէ կարելի է խնդրեմ առանց նեղանալոյ, ելանել աստի և գնալ որսորդութիւնդ շարունակել: Քեզանէ ոչ ոք խրատ չէ խնդրում: Էս վերջին խօսքերն էնպէս ազդու և զգալի արտաբերեց, որպէս թէ բարկութիւնից լալնէր ուզում:

Քանի՞ մի բոպէաչափ խոր լռութիւնից յետոյ, Պօղոս հայրն, իմ նշանացի անելովը, ներս գնաց միայնակեցի մօտը--ասեց, հայր սուրբ, մի՞թէ ճշմարիտ քրիստոնէի վայել է էսպիսի եղանակաւ վարվիլն մին օտար հիւրի հետը, խնդրեմ եղբայր,

աչքերը գեպ ի կուլէն, չռելով, էթէ կարելի է Պօղոս վարդապետ էն ջրիցն։ Պօղոս վարդապետն իմացաւ ջուր է ուզում, վերկացաւ կուլէն տարաւ ու համեցէ՛ք արաւ։ Երբ միայնակեացը կուշտ խմէց, գլխով շնորհակալութիւն արէց ու մօտը դրեց, դարձեալ աչքերը վայր ձգած, թմրած, որպէս թէ կէս քուն կէս զարթուն է, յանկարծ վերառաւ, որուն ես երբէք չէի սպասում—ինչո՞վ կարող եմ պատուել ձեզ եղբարք, ճշմարիտ է հիւր էք Աստուծոյ, ընդունեցէ՛ք մեղաւորէս էն, ինչ որ ունիմ, ահա խնդրեմ վայելէք, ինչ որ ջերմեռանդ ուխտաւորնէրը բերած են ինձ համար։ Էս ասելով ձեռը տարաւ բարձի տակիցը մին տօպրակ հանեց, բաց արաւ, առաջնէրնուս դրէց։ Միջին կայն աղանձած կտուտհատ, կանէփի սերմն, քունճուրթ, սև մեվուշ ու չամիչ, խառն։ Ճգնաւոր հայր, ասեցի ես, ինձ միայն ձեր օրհնութիւնն է ցանկալի, ի հարկ է նրանէ աւելի ինչ շնորհ անէք, անգին և պաշտելի է ինձ։ Սկսեցինք փոքր փոքր չարաշ անել, իսկ նա վիզն ծռած, մեզ նայում էր աչքի տակովը։

Միայնակեցի երեսը դէպ ի դուռն էր, ուստի և քարայրը միայն լոյս էր ստանում։ Վասն որոյ և շատ պարզ էի տեսնում ես նրա կերպարանքը, որ վեհ էր և պարզ. նայուածքը սաստիկ զգացմունք էր յայտնում տխրութեամբ խառն, բայց մելամաղձը երևում էր, որ հասակը պարթև է, երեսն սպիտակ և խառն կարմրութեամբ, քիթն արծուանման, աչքերը սև, մեծ մեծ և սրատես, ճառագայթաձև արտևանունքներէ է պատած, այլ իմն գեղեցկութիւն էին տալիս երեսին, մորուքն երկար, լաւ սանդրած, փառահեղ և ձիւնափայլ. ճակատը լայն և կուշ կուշ եկած, լանջքն լայն, մէջքը բարակ, մատներն երկար և յստակ և ձեռներն սպիտակ, սև տաթից տերողորմէն բռնած.—գլխին ունէր թաղիքից գլխադ, հագին գեղնացած, կիսամաշ սպիտակ սալմասի կտաւից կապայ և կօտիկն կապոյտ գոյն։ Էս ամէնը նայելիս, մին մեծանձնութեան նշան էին ցոյց տալիս քարանցաւի մէջին և կերպարանքի վրայ, որ վշտէր էին երևում, չէր մեծ ազդեցութիւն արած ծերութիւնը։

Հարուստ ժամանակ լռութիւնը շարունակէց մեր մէջը։

սուրբը ձեզանէ առաջ, պատմեց թէ, դուք նոր էք եկած էնտեղացի, և լաւ լաւ տեղեկութիւններէր և լուրէր ունիք, ասա՛ ինդրեմ, դերութիւնք, ասպատակութիւնք, և աքսորումն եկեղեցեաց և վանօրէից կողոպտումն, քրիստոնէութեան հալածումն արդարև անհետ եղած են մեր հայրենեաց մէջէն : Հայրենիք բառն արտաբերելիս, աչքէրն արտասունքով լքցուեցան, վասն որոյ փոքր ինչ երեսը միւս կողմը շրջէց, մեզ իւր արտասուելը ցոյց չտալոյ համար :

Ճշմարիտ է հայր սուրբ, ասեցի, ճշմարիտ է, անցկացան, գնացին էն դառն ժամանակները, որ դուք տեսած էիք : Հայաստան, որ չորս հարիւր տարից աւելի, զրկուած քրիստոնեայ թագաւորի թեւէրի տակին հովանաւորվելուցն, դառն արտասվում էր և հեծում, հիմի, փառք Աստուծոյ կառավարվում է Ռուսաց քրիստոնեայ թագաւորից : Արդարև երջանիկ է հիմի, և աւելի երջանիկ կը լինի այսուհետև, եթէ Հայաստանի որդիքն կարողանան գնահատել և արդիւնաւորել . . . : Էս քանի մի բառն զարմանալի փոփոխութիւններէր գործէց նարա երեսի վրայ, զոր շուռ տուէց դէպ ի ինձ : Էս կիսակենդան մարդն, երևումէր, որ իսկ և իսկ ցունկութիւն ստացաւ, իւր անձն աժխուժութեամբ ուղղել, իւր տեղումն, բնական կերպարանացն , ուղղուիլ և փառացի նստիլ : Բայց տկարութիւնը և անզօրութիւնը չէին ներում ինքեան, վասն որոյ փոքր փոքր բարձի կողմը վեր քաշուելով, գլուխն ուղղեց, կերպարանքը ծռեց ուղիղ դէպ ի ինձ, ուրախ դիմօք և զարմացմամբ հարցրեց, ի՞նչ, ի՞նչ, ո՞ր տեղաց էք հզօր քրիստոնեայ թագաւորն, որոյ անունը միայն ի քանի մի ամաց հետէ հեռուանց, երբ ես երեխայ էի, միտքս կը դայ, կլսէինք, կարողացաւ անցանել դալ զինուց զօրութեամբն, տիրապետել մեր հայրենիքը, խլել առնել անօրէն Պարսից ձեռքէն : Մի՞թէ : Ուրեմն մեր ծերէրն մարգարէացան, որք կասէին թէ, մին Ռուս անուն ազգ դալոց է փրկէ մեր Հայրենիքը . . . բայց էս ևս կը կցէին թէ նոցա հեռաւորութիւնը մեզանից և ճանապարհաց դժուարութիւնները, հարիւրաւոր տարիք կքաշէ . . . մի՞թէ : Փառք, փառք քեզ Աստուած, որ էնքան հոգիս չառեցիր, մինչև թէ չտեսայ այօր, գոնէ լսեցի ական-

էսպէս Պօղոս վարդապետի հետը դուրս եկանք ու ճանապարհնէրնիս շարունակեցինք դէպ ի Մենաստանը։ Շատ ստիպեց ինձ Պօղոս վարդապետը նստիլ մին քարի տակին, փոքր ինչ հայ ուտելը բայց ես ճաշակ չունէի, ըստ որում աղանձիցն կերած էի, իսկ նա հացիցը հանէց ուտելով քայլում էր ու ճանապարհը շարունակում։ Ա՛ռ քեզ ծեր մարդոյ ստամոքը և մարսողութիւն։

Միայնակեցի հետ տեսութիւնս և քանի մի բոպէ նորա խօսակցութիւնը, ուրիշ մի ազդեցութիւն ունեցաւ վրէս, այսինքն յոյսս հաստատուն էր, որ քառասուն տարի էս ծածկեալ խորհուրդը բոլոր վանքի միաբանութիւնից, կարողանամ յայտնել թէպէտ վանահօր և միւս հոգևորականաց կարծիքն իմ յոյսին հակառակն էր։

Միւս օրն ամսի 24-ին վաղ առաւօտեան ժամը հինգը վերկացայ երեկուան նման որսորդութեան շորերովս ճանապարհ ընկայ դէպ ի քարայրը։

Շըշկլուած, որ դուրս էի եկած խուցէն, մոռացած էի ժամացոյցս վեր առնել, վասն որոյ չկարողացայ իմանալ թէ քանի ժամուն եկի։ Արեգակը բաւականին տաք էր, երբ հասայ քարանձաւի դուռը։ Հաղալով, ահով, դողով, կամաց կամաց ներս գնացի։ Միայնակեացը տեղումը նստած Սաղմոս էր քաղում։ Ամուսուած օդնական ասեցի, մօտեցայ աջը համբուրել թոյլ չտուաւ։ Առաջի նայելն, զայրացման և անբաւականութեան նշան էր երևում աչքերի մէջն։ Քանի մի բոպէ և ես լուռ մունջ նստեցայ մնան, մոքումս դրի թէ որ էնպէս յամառած մնայ ես փոքր ինչ, խնդրեմ աղաչեմ կակղացնել, ապա թէ ոչ յանձարութենէ վերադառնալ—բայց բաղդաւորութեամբ, ինձ ես տրտում կամ յօնքէրս քաշ տուած տեսնելով կամ խղճահարեալ կամ ամաչեցնալ իւր բուն կերպարանքն փոխեց ի քաղցրութիւն ու նշանացի արաւ դլխով տեղեցս վեր կենալ և երեկեան նստած քարի վրայ նստիլ ծալէց Սաղմոսն և բարևէց կիսաբերան։ Տեսայ չէ՞նա իրան ծանր է ծախում ուզում է ես սկսեմ խօսքի թելն, վասն որոյ և հարցրի ինչպէս ես էսօր հայր սուրբ։

չուած զարմացած մնած գլուխը շարժելով-վեր առաւ-էս կերպ հրացանը առաջին անգամն է տեսնելս, ի՞նչ տեղի գործ է։

Ֆռանգստանի (Եւրոպայոց) գործ, Հայր սուրբ, պատասխանեցի, միայնակեացներն էսպիսի բանէրի հարկաւորութիւն ամենևին չունին որ տեսնին, Սաղմոսն ու Ժամագիրքն է նոցա հրացանը։

Միայնակեացն ախ քաշելով վերառաւ, որդի՛ ես չէի ծընած միայնակեաց ընել և էսպիսի տեղումն մնալ-բայց-բայց աշխարհքիս բերմունքն էին, որք ինձ ստիպեցին համարեա կէս դար գալ թափառիլ ինչպէս վայրենի կենդանի էս սարէրի գլխին։

Երբ էս խօսքէրը լսեցի, ուրախացայ, ըստ որում ինքն պատճառ տուէց հետաքրքիր լինելոյ, ժամանակ չկորցնելով հարցրի։ Զհասկացայ, Հայր սուրբ, ի՞նչ մտօք ասեցիր թէ, կրօնաւորութեան համար չէի ծնած, ապա ինչի՞ համար էիր ծնած։

Եղբայր, փոքր ինչ սպասէց և ապա վերառաւ, եղբայր մեք և ես ժամանակ ունէինք աշխարհքումս օրէր անցկացնելոյ, բաներ տեսնելոյ . . . հրացաններ ձգելոյ . . . թուր, սուր խփելոյ . . . գործքէր կատարելոյ . . . ինչ և իցէ, թողեցինք էնդունք, թողեցինք . . . . վերջէրնիս տեսնում ես հիմի, խաղաղ ու հանդարտ կեանք . . .

Ի հարկ է, ի հարկ է, ամենայն իրայ վերջն է գովելի, և ով, որ մահկանացուն չէ ցանկացել իւր վերջն խաղաղ անցկացնել, բայց . . . . ։

Ա՛հա էդ բայցն է-ընդմիջեց խօսքս-էդ բայցն է . . . . ես, սիրելի՛ չուզեցի ունենալ էդ բայցը։ Թողն աշխարհքիս փառքը, պատիւը, իշխանութիւնը, հարստութիւնը, կին, դուստր, որդի, գերդաստան . . . ինչի՞ . . . միայն, միայն էս անդորը կեանքը, հանգիստ խղճմտանքը ժառանգելոյ համար։

Հաղուագիւտ է, հաղուագիւտ, Հայր, մեր օրէրը աշխարհիս երեսին մարդ գտնել էդ վիճակումը։

Չէ՛, չէ՛ . . . չէ՛ հաղուագիւտ, ով գիտէ . . . ով կարող է ասել թէ, ինձ նմանը իսկ և իսկ, տես, նայէ, էն Արարատ սարի մէջին չկա՞յ մին ուրիշը--ով գնայ, պտուտէց աշխարհքիս անթիւ սարէրը։

խեցի խօսքն ասելով- իմ խնդիրքս այն է, որ դու քո պատմութիւնը ասելով ես և ինձ նմանը, ով կամ ոք որ լինի, երբ լսէ, կզգուշանայ ու աշխարհիս ստապատիր փառքէն, պաշտէն չի խաբուիլ: Ուրեմն եթէ այն լսողը զգուշանայ, և պատճառը դու լինիս, մի՞թէ քեզ վարձք շատից քչից չի՞ լինիլ:

Որդի, իմ պատմութիւնը երկար է, ինչ հարկաւոր է քեզ էդպէս բաներ հարցնել միտքդ ի՞նչ է, ասա պարզն:

Հայր, հաւատացիր, ոչինչ նպատակ, միտք, դիտաւորութիւն չունիմ, ղէ, մին լաւ մտածէ. ի՞նչ նպատակ պէտք է ունենամ ես-էս է իսկակ խօսքս և պարզն ասեմ, հետաքրքիր եմ իմանալ քո ուստից լինելը, թէև արտասանութենէդ իմանում եմ. նոր Զուղայու հայերիցն ես, բայց քո անունը, ինչ ազգից, գերդաստանից և պատճառն էսպէս տեղում ճգնուելոյ ցանկանում եմ լսելը: Ահա իմ դիտաւորութիւնը, հաւատացէ՛ք, ուրիշ ոչինչ չկայ:

Որդի ասէց, երկար է իմ անցքը:

Հայր, որքան և երկար լինի ես ուրախութեամբ կլսեմ, մին, երկու, երեք, մինչև տասն օր էլ որ ասես, կգամ կնստեմ էս տեղ, առաւօտից մինչև երեկոյեան, կլսեմ. միայն թէ դու շնորհ անես, ասես, ես խնդրում եմ քեզ:

Ժամանակի ժամանակ քաշեց, որ ես խնդրում էի նրան, իսկ նա միշտ ընդդիմանում էր ինձ, թէև քանի մի բառ ասում էր որոյ մէջին հօր անունը յիշելով կիսատ-միսատ և կամ էս տեղից, էն տեղից խօսքեր խառնելով ծամ-ծումով: Ես էս չընդունելով և խնդրելով համոզում էի, սկզբից իւր պատմութիւնը սկսէ: Ի վերջոյ տոխպեալ իմ շատ աղաչանքէն մին քանի անգամ ամ քաշելով, սկսեց ասելն, երբ և ես ականջներս սրեցի, ունկն դրեցի ուշադրութեամբ:

«Թահմազ Ղուլի խանը, որ և յետոյ Նադիր Շահ անուանեցաւ, երբ Պարսից կողմերքումը կռիւ էր անում ընում, յաղթութեան ձէնը հասնում է Վրաստան, որ Օսմանեան տէրութեան ներքոյ էր էն ժամանակն: Թիֆլիզ, որ Վրաստանի երևելի քաղաքն էր ու էն տեղ Վրացւոց Վալիքն կամ խանէրն կնստէին, Օսմանեաց ձեռքին լինելով էն ժամանակն, վասն որոյ Օսմանցւոց փաշէքը կամ զլխաւոր կառավարիչները

գումեն և դին առաւօտեան տանումեն ձգում մին փողոցի մէջը, ուր սպանվողի երևելի քարվանսարէն է լինում: Եւ ըստ որում մեծ գումար էր հարկաւոր էն ժամանակուայ տաճկաց զօրացը ռոճիկ հատուցանելոյ համար, վասն որոյ փաշէն յիսուն հազար մառչիլ է առնում ու հրամայում տանեն Թաղեն: Իսկայ փաշէն տեսնում է արդարև Նադրի գալոյ լուրը դէպ ի Թիֆլիզ հաստատվում է, սկսում է վրէժը հանել միւս խորհրդակիցներէն, որոց շատերն երկիւղելոց դուրս են փախչում Թիֆլիզից. գնում ամուր տեղրանք, որք շատկան Վրաստանու արևմտեան և հիւսիսային կողմերքումը, ինչպէս լսած եմ:

Մինչ այս մինչ այն պապս լսելով էս համբաւները, և տեսնելով Նադիրը այլևայլ քաղաքների վրայ ուշանում է, էլ չէ համարձակվում վերադառնալ Թիֆլիզ--մնում է Նադրի բանակումը, պատերազմներումը փոքր ժամանակի մէջը իւրեան քաջութեանց և հաւատարիմ ծառայութեանց համար ռոճիկ, թոշակ և պարգևներ է ստանում Նադրէն և յետոյ գլխաւոր նշանակվում Խօրասան գաղթեալ Հայ ժողովրդոց վրայ: Լսել եմ, բայց մոռացել եմ, լաւ մտիս չէ թէ ինչպէս է պատահում որ ակամայ փոխում է հաւատն և մահմեդականութիւն ընդունում: Ասացի ակամայ, ըստ որում հայրս կպատմէր թէ գեօրգի պապս գիշեները Սաղմոս, Աւետարան կկարդար և նըրան էս կարդալ կը տար, և թէ հայերէն Ա. Բ. և աղօթքները անդիր պապիցս էր սովորած: Ի վերջոյ պապս իւր ծառայութեանց փոխարէնը նշանակվում է Ասպահանու Հայոց վերայ կառավարիչ, և իւր նման հաւատուրաց մի Հայ աղջիկ ճարում և հետը պսակվում: Սրանից մին տարի քանի մի ամիս անցած ծնում է հայրս, սրան թլփատում են անուանում Ալլահվէրդի, և ծածկաբար ինքում անունը դնում Աստուածատուր: Երկու տարի անցած ծնում է մին դուստր, որ անուանում են Ռէհան:

Ալլահվէրդի կամ Աստուածատուր հայրս ծածկաբար, պրպէս ասեցի, պապիս նման քրիստոնէութիւն է անում լինում և յայտնի մահմեդականութիւն: Կպատմէր հայրս թէ գեօրգի պապս ամենայն գիշեր կժողովէր ինձ, մօրս և քանի

ժամանակը շատ Հայ բնակիչներ լինելով. Ալլահվերդի խան հայրս աշխատում է և ստանում սոցա վրայ կառավարչութեան պաշտօնը, ուր և պահվում է մին գերի Հայ աղջկայ հետը : Ապահանու բերել է տալիս իւր մօրը, քվորը և ծածուկ Հայ ծառայիցը : Երկու տարի անցած ջանցած ծնում եմ ես—թլփատում են անունս դնում Յաղուբ, և կնքում՝ Յակոբ :

Երազի նման մոխս կդայ մեծ մօրս, այսինքն հօրս մօրը որոյ անունն էր Մարիամ. և Պարսիկները Շահում կասէին, այսինքն Շահի հետ խօսացող, ըստ որում Նադրի հետը կասէին մին քանի անգամ խօսացել էր սա : Յանուն հօր սովորելս, երեսիս խաչակնքելը, ծնրադրութիւնը, Հայը մերն անգիր ասելս, Նրան եմ պարտական : Տօն օրերը, որ նա շատ լաւ մտքով դիտէր, նոր նոր շորէր կհագցնէր ինձ և կասէր, որպէս էս օրը մի մեծ ուրախութեան օր է մեր Հայերին մեր հայրենեաց մէջը, մեք ևս պէտք է ծածկաբար էս օրվան տօնի յիշատակը կատարենք : Մի զատկի օր ծածկաբար մեր տանը կարմիր ձու են ներկում ու մին հատ տաք տաք տալիս են ինձ: Ես իսկ և իսկ տանում եմ մեր դրացի մահմետական երեխայիցը ցոյց տալիս : Երեխայից մինը գնում է իւր մոր մօտը լաց ընում. թէ ինչի՞ ինքը կարմիր ձու չունի և թէ մեր տանը ներկում են : Էն օրվան կարմիր ձուն ձեռքում լինելոյ համար և էն էլ տաք, որպէս երևի, տեսնում են դրացիք, կարծիքի մէջ է են ընկնում : Շահում մեծ մայրս շատ դըժուարութեամբ է կարողանում նրանց կարծիքը ցրել ասելով թէ, իւր ազգականներէն մինը, որ մինչև էս օր քրիստոնեայ է մնացած, ըստ որում իւրեանց այսինքն քրիստոնէից զատիկ էր էս օրս, եկել էր տեսնելոյ, և ձու էր բերել բայց ինքը Շահումը պիղծ իմանալով Հայի ձեռքէն էն օրվան ձուն ընդունելը. վերադարձրել է բերողին, և միայն մին հատ վեր է առել տուել երեխային, որ տեսած էր և լաց էր լինում. և թէ եթէ երեխայն ուսէր էլ չէր ընդդէմ մահմետական կրօնից, ըստ որում երեխայ էր : Իսկ և իսկ մին մօլլայ է պատահում անցկենալիս, ժողովված կանայքը հարցանում են մօլլին, որ թէ և հաստատում է Շահումի կածիքը այսու ամենայնիւ կաս-

հայի վրայ մանաւանդ գիշերները։ Նա շատ աշխատէր, յոր-գորեց հօրս, որ ընտանիքով դնայ Թիֆլիզ։ Բայց անկարելի էր, որպէս հայրս խօսում էր նրա հետը, նախ հեռաւորու-թեան, երկրորդ էն խառն ժամանակի համար, որ մին քաղաքի կամ գիւղի գլխաւորը միանգամայն չէր հնազանդվում, ամենայն տեղ մին մին ինքնագլուխ տիրապետողէր լոյս ընկած։ Բոլոր Պարսկաստանը երևման մէջն էր։ Սա կպատմէր, որ պատիս ազգականները Թիֆլիզ մեծ անուան, հարստութեան, կալուա-ծոյ և փառքի տէրեր են։

Արանից յետոյ մին եպիսկոպոս էլ եկաւ գնաց Հնդկաս-տան երբ և հայրս Շիրազ չէր։ Այս եպիսկոպոսն ինքաւ Հայոց եկեղեցւոյ խոցերումն—ամենայն գիշեր մեր տանիքը նորա հա-մար ծածուկ կերակուր քաղքրեղէն կը տանէին, և մին գիշեր էլ մայրս ինձ ուղարկէց նորա աջը համբուրելոյ—սա օրհնեց և մին Մասունք կախեց շընքէս ու ասաց, որպի թէ էս միշտ ճտիցդ քաշտուած պահես, երբէք քեզ պատրեպմում հրա-ցանի կամ թնդանօթի գնտակ չի դիպչիլ, ինչ նեղութեան և վշտութեան մէջ ընկնիս, թէ ջերմեռանդ հաւատով յուսաս աղօթես, էս Մասունքի զօրութեամբ անպատճառ կազատվիս։

Միայնակեացն էս ասեց ու շատկի տակիցը, որ ճտիցը քաշ էր արած մին կեղտոտ կտաւով էն Մասունքը, հանէց ինձ ցոյց տուաւ, և ստիպեց համբուրեմ։ Ահա, որպի, կրկնէց, որ-պի էս է էն Մասունքը, որ մինչև ցայսօր ունիմ և փորձած եմ շատ անգամ են հաւատուրացս, ես հաւատադրուժս պա-տէրազմների մէջ և նեղութեանց պատահելիս, յիշած ու ա-պաւինված սրան աղաչուած եմ, սորա զօրութեամբը։

Պիտի շարունակուի.

նայ առ մեզ. և վասն պէս պէս բաջաղմանց Յունայ յաղագս պահոցն սրբոյն Սարգսի. զայս ամենայն լուծաք. և զտուեալ պատճառսն մեր, ողջամիտ վարդապետութեամբ ընկալաք։

Գնացաք և առ Ռաստովու Սամուէլ արքեպիսկոպոսն, և նա ըստ քաղցր բարուց իւրոց, ընկալաւ զմեզ սիրով և զսէրս բաղձումն եցոյց և տեղեկացաւ զհաւատոցն մերոյ։

Մարտ ամսոյ 16 ի տօնի սուրբ Լուսաւորչին ժամ տրաբաք ի Մոսկով, և բաղումք Ռուսք եկին։

Յամսոյս 23, սրբազան Պլատօնն հրաւիրեաց զմեզ ի ժողովարան մեծ եկեղեցին, զոր կոչեն Ուսպենսկի սօբոռ, այսինքն՝ Ննջման աւադ եկեղեցի. զի Կայսերուհին զգեստ էր առաքեալ ի փոքր եկեղեցոյն. մեծ հանդէսիւ և ամենայն ուխտիւք ի մեծ եկեղեցին առանէին, գնացաք ընդ աղնիւ Աղայ Մինասին։

Ի սմին աւուր, եկին առ մեզ ի Ղռիմու ելեալ ժողովրդենէն արք երեւելիք, ԴէֆուԹարք. կապիտան. Պարոն Յովհաննէսն Աբրահամեան. պարոն Մկրտիչն Պետրոսեան. Պարոն Դանիէլն Խօջարէյեան, և այլք. և յառաջադոյն կային ի Պետրպոլիս ի Ղռիմու առաքեալ մեհտեսի Յարութիւն, և մահտեսի Կարապետ։ Զի յետ մեծի յաղթութեան, Ռուսքն, ըզ Թաթարսն ինքնագլուխս արարեալ զքրիստոնեայսն էհան անտի զէյոս և զէջուռմն ի ձեռն ենեալ Ալէքսանդր Վասիլիչ Սուվորովին. և բերին զնոսա ամենայն ախիւք իւրեանց ի գուբեռն Աղովու, և մինչ տեղ ոչ էր նշանեալ վասն նոցա ի տառապանս կային. զրեթէ բաղումք մեռան 'ի զիւղօրայսն ուր ցրուեալք էին՝ ապա իբր 'ի տնօրէնութենէ աստուծոյ մեք ի պատճառ օծման Սանկտպետերբուրգու եկեղեցւոյն մինչ զընդայաք զրեցաք նոցա 'ի յԱզովու գուբեռն մխիթարութիւն. ապա եկին վերոյ երեւելի արքն և հանդիպեցան մեզ 'ի Մոսկով. մնացեալ մեր անդ 'ի միասին գնացաք 'ի Պետերպօլիս վասն բնակութիւն խնդրելոյ որպէս զկնի զրելոյ եմ. որ նոքա խնդրէին զՌաստովու բերթնատեղն որ է 'ի վերայ Դօն գետոյն մերձ յԱզովու և Չէրքէզ Քիրմանու քաղաքին, որպէս և խնդրեցի առաւելութեամբ ընկալայ հանդերձ սրվելեկոմն, այսինքն բաւականական հրովարտակաւն կայսերական, ուր զհարկ և զկա-

Տեսաք զամենայն անօրէս և գանձս վանիցն որ լի է ոսկով և արծաթով, և պատուական զօհար քարամբ մարգարտով և ոսկեճաճանչ և զառնաւուիր դիպակօք և հանդերձիւք: Զկնի որոյ տարան զմեզ ի վարժարանն, սիւն պատուոյ էին շինեալ անդ ի պատիւ մեր, և մինչ մտաք ի ներս երգեցին երգ ինչ. և ապա ոմն աշակերտայ եալ ի յամբիոնն և ասաց զդովեստ ինչ ի դէմս մեր և զկրօնէ մերմէ յուղղափառութենէ և զայլ ինչ: Յետ աւարտման եկն և աջ էառ, և Աղայ Յովակիմն յօժարեաց զնա «բզեռառ դիանով» և այլ տեղիս ևս ըստ պատշաճին տալով: Ի նոյն օրն անդ ճաշեցաք. զկնի ճաշուն ի զանգակատունն ելաք որ զարմանալի է տեսողաց գեղեցիկ դրութիւնն և շէնքն նորին: Մէկ Հայոց խաչ դոյր անդ. մէջն մասունք. մասունքն ոչ իմացաք ում դոյ, սակայն ի վերայ նոցա գրեալ թիւն է այս ՌԿ. և գրեալ ունէր յիշատակ այսպէս, «ես սարկաւագ վարդապետս Նորոգել ետու զխաչս զայս» թարգմանեցին և ընդ խաչին պահեցին, մինչ ելանէաք Նամանիկն իւրով կառէթիւն եկն ընդ մեզ մինչև ի յայգին իւրեանց և համբուրեալ զմիմեանս յետ դարձաւ՝ և մեք գնացաք ի Ֆապրիկն Աղայ Յովհաննէսի, յորս էին բաղումք մերազնէից, քանի օր անդ զկեանս անցուցաք յոյժ բարեպէս ըզբօսնելով ի Ջուրս և ի մայրիս:

Մայիսի 26 օծաք զՀիմանց քարինս Մոսկովու Նորաշէն եկեղեցւոյն յոյժ հռչակաւ և մեծ հանդիսաւորութեամբ ի տան Ներսէս Աղայի եկեղեցւոյն:

Յունիսի մուտն ի տօնի սուրբ Լուսաւորչին եկն ի վերապէն, արկաք զՀիմունս նորին մերով ձեռամբ ըստ օրինի. զի ի տեղւոջն այնմիկ զգեստաւորեցաք և իջաք ի Հիմունս առ ի հարկանել զքարինսն. և անտի ամենայն բազմութիւնքն եկին ի տուն Աղայ Եղիազարին և ճաշակեցին ոմանք, և անուն եկեղեցւոյն անուանակոչեցաւ Սուրբ Խաչ վերայ. զի յիշատակ հանդուցեալ Աղայ Խաչիկին կանգնեսցի, որ էր երրորդ որդի Եղիազար Աղային:

Յունիսի 8 Աղայ Յարութիւնին Խաչանեան գրով սրբաղան Պլատօնին. գնացաք ի նոր Երուսաղէմ և ի սմին մանաստէրն տեսաք և զամենայն գանձս սոցին. Երուսաղէմ էր յոյժ

արժանի տեսութեան վասն յարմարակերտ շինուածոցն, զոր սուրբ Երուսաղէմ կոչեն Ռուսքն։

Յուլիսի 13 կրկին գնացաք ի Տրոյէցն. զի Պլատոն արքեպիսկոպոսն անդ էր հրաժարական ողջոյնն ետուք վասն մեր Պետրոպոլքու սրբազան Գաբրիէլ արքեպիսկոպոսին յանձնարարութիւն գրեաց, ընդ մեզ էին Իւան Գրիգորիչ Սումպատովն և Աղայ Մինասն. ի նոյն օրն ընդ նմա ճաշեցաք։

Յուլիսի վերջն ընդ ազնիւ Աղայ Յովհաննէսին ի Մոսկովուելեալ գնացաք ի Սանկթ Պետրբուրգ բաղում խնդութեամբ և ի յՕգոստոսի 5 ժամանեցաք յաւուր շաբաթու ի նոյն օր պայծառափայլ քնեազ Գրիգոր Ալէքսանդրովիչ Պոտեմկինն. լուեալ զգալուստ մեր, իսկոյն կոչեալ էր զմեզ ընդ ազնիւ Աղայ Յովհաննիսին. գնացաք ի կայսերական պալատն առ նաբաղում յարգանս ցուցեալ մեզ և սէր. խօսեցաւ ընդ մեզ. մինչ երկու ժամն վասն հաւատոյ, վասն կարգաց եկեղեցւոյ, վասն եկեղեցական զարդուց և զգեստից, և վասն կեցութեան մերոյ։ Եցոյց մեզ զգեստս ինչ զոր վասն նորակերպ եպիսկոպոսի ուրուք պատրաստեալ էին։ Խոստացաւ և վասն մեր ռոճիկ կարգել. հրամայեաց և ի վաղիւն գնալ ի յայլակերպութեան եկեղեցին որ էր ամսոյ վեց և իւրեանց տան այլակերպութեան առ որ գնալոյ էր և նորին կայսերական մեծութիւնն ի Խարսօնու և Նովոռուսի եպիսկոպոսն ի Կիվօռն ձեռնադրել. ի նոյն օրն՝ Դրէֆէոս արքիմանտր ոմն՝ առաքեաց առ սրբազան եպիսկոպոսունս Նովոդօրօտու և Պսկովսկու՝ որ զմեզ սիրով ընկալնուցուն ըստ հրամանի պայծառափայլի ի նմին ժամու գնացաք առ Գաբրիէլ արքեպիսկոպոսն Պետրպոլքու զոր կարի մարդասիրութեամբ ընկալաւ. և ի լուսանալ առաւօտուն մինչ հանդէսն ամենայն պատրաստեցաւ. և անձնապահ գունդն կանգնեցաւ ի դրան նոյն այլակերպութեան եկեղեցւոյն վասն գալստեան թագուհւոյն։ Ըստ հրամանի քընեալին ընդ Աղայ Յովհաննիսին վաղ գնացեալ գնդապետ Տոլստոն, եկեալ աջէառ. և ափիցեռք արկեալ առաջի մեր հասուցին զմեզ յեկեղեցին. եկն քնեազն աւագ քահանայիւն Անդրէիւ զմեզ խեղանն հրաւիրեցին. և քնեազն խնդրեաց սիրով ընկալնուլ զմեզ. և աջ տուեալ միմեանց ըստ օրինա-

կանայ. եկն թագուհին, և մեք ըստ հրամանի քնեազին եւ
լեալ ի սեղանոյն ի յարքունական դուռն սեղանոյն երկրպագե-
ցաք թագուհւոյն. և քնեազն պատմեաց զմէնջ։ Հանդէսն ա-
բարին և ձեռնադրութիւն։ Թագուհին եկն ի սեղանն, մեզ
դլուխ եւ ծիծաղելով և քնեազն ընդ նմա, նոյնպէս և մեք
իւրն, անդ կալով և մեզ նայելով ի վերայ մեր խօսէր և քնե-
ազն պատասխանէր։ Յետ արձակման պատարագին ընդ
սրբազան եպիսկոպոսացն սինոթի ի տան Անդրիա տէրտ քա-
հանային ճաշեցաք և բազում խնդութեամբ լցաք մեք և ազ-
գն մեր վասն յաջող հանդիպմանն մերոյ։

Օգոստոսի 22 ժամ արարաք ըստ խնդրոյ պայծառափայլ
քնեազ Գրիգոր Ալէքսանդրովիչ Զատեմկինին. եկն բազում
նախարարօք ի յեկեղեցւոջն ասացաք զպատշաճաւոր բանս ինչ
և զկնի ժամուն խնդրեցաք վասն Ղռիմոյ եկեալ ժողովրդոցն
զառաստով զի գուբեռնաթ տեղւոյս հակառակ էր, և պայծա-
ռափայլ քնեազն իսկոյն շնորհեաց մեզ զառաստով, և յոյժ
յամօթ եղև հակառակող գուբեռնաթն, թէպէտ շատ դնոյց առ
քնեազն իբր ի խաբանել. սակայն ոչ կարողացաւ։ Զի մեք
Իւան Պետրովիչ Գորչաւն ծանուցաք քնեազին նորին չկա-
մութիւնն և քնեազն սասատեաց նմա։

Ի սոյն ամսոջս Սրբազան եպիսկոպոսունքն Գաբրիել և Ի-
նոքենտի հրաւիրեցին զմեզ ի ճաշ յատուկ յատուկ. և բա-
զում մարդասիրութիւնս ցուցին մեզ և մեծապէս սիրով
յարգեցին։

Հոկտեմբերի 8 Իւան Գրիգորիչ Զորնիշովն ի ճաշ հրա-
ւիրեալ էր զմեզ մեծաւ փափակմամբ։

Թուին 1780 Յունվարի մուտն Իւան Պետրովիչ Գորչն
եկն առ մեզ և յայտնեաց զգնալն իւրեանց ի վերայ Պարսից
առ ի տիրել զծովեզերեայ տեղեանն հարցումն արար վասն
Պարսից երկրացն, և որք հեռաւորութեանց քաղաքացն ի մի-
մեանց և կարողութեանց նոցին և որքանութիւն զօրացն Հա-
յոց և Տաճկաց, սկսեալ ի Դարբանդու և ի Գիլանու, մինչև
ցԹարվէզ և ի Յերևան. և անտի մինչև ցՂարաբաղ և ի Շըր-
ուան։ Եւ մեք որքան գիտէաք ասացաք. և ինքն գրեաց Ռուս-
տերէն և տարաւ։

Յունվարի 2 ենեարալ Պոռոշիկ Ալէքսանդր Վասիլիչ Սուվորովն եկն առ մեզ ի տեսութիւն. և մեր ազնիւ Աղայ Յովհաննէսն ընդ նմա ի վերայ նոյն նիւթոյն. և ի վերայ երկրացն մերոյ բաղում հարցմունս արար մինչև ցերկու ժամն : Եհարց և մանրամասնաբար զկացութենէ սրբոյ Աթոռոյն մերոյ Էջմիածնայ և յուսադրութիւն արար յոյժ որպէս թէ նորոգելոց իցեն ի մեզ իշխանութիւն ինչ՝ որ և ի մէնջ եղեալ գըՆայեալ էր առ պայծառափայլ քնեազն Գրիգոր Ալէքսանդրիչ Պոտեմկինն և պատմեալ նմա զամենայն ասացեալսն մեր վասն քաղաքայ :

Ի սոյն ամսոյ 3, պայծառափայլ քնեազն խնդրեալ էր զմեզ ընդ ազնիւ Աղայ Յովհաննիսին Եղեազարեան, ի միասին գնացաք առ նա և բաղում ինչ խօսեցաք վասն այցելութեան ազգիս մերոյ և աշխարհին, և բաղում ինչ Աղայ Յովհաննէսն պատմեաց և հայերէն աշխարհացուցիւն զգաւառսն Հայաստանեայց և զերևելի քաղաքսն ցուցաք, և ինքն յետ բաղում հարցաքննութեանցն զկացութենէ ազգին մերոյ և սրբոյ աթոռոյն և զկաթուղիկոսէն. և մեր թախանձելն նորոգել ի մեզ զմասնաւոր տէրութիւն ի մեծն Հայաստան ի քաղաքն Երևան. պատասխանեաց թէ կարելի է, բայց պիտոյ է պատրիարգին ձեր քանեօք իշխանօք խնդիր ի գործ ածիցեն վասն փրկութեան ձերոյ, որ մեք այնու ի յօգնութիւն ձեզ եկեսցուք : Եհարց և զարքայէն Վրաց և զայլ ինչ բաղում մեք և Աղայ Յովհաննէսն պատասխանեցաք բաղում ինչ, և յոյս մեծ առեալ ի բանիցն նորին. խնդութեամբ եկաք և նոյն յուսովն ճանամք այժմ ընկալուլ զխոստացեալն ի ժամանակի իւրում : Հրամայեաց և Աղայ Յովհաննէսին գրել ի Զուղայ էմին Աղային որ եկեսցէ, որ և գրեաց և զայն գիրն առաքեաց Հաշտարխանու դուբեռնաթին՝ որ նա յղեսցէ ի Զուղայ առ նա որ շուտով եկեսցէ :

Ի սոյն ամսոյ 13, նոյն ենեարալ Պոռոշիկ Սուվորովն զմեզ Աղայ Յովհաննիսիւն կոչեալ էր առ ինքն վասն տեղեկութեան կացութեանց և վարուց, նաև որպիսութեանց մելիքանցն մերոց որք ի յԱրցախ աշխարհի են, որ այժմ կոչի Ղարաբաղ և կամ Սղնախ, և մեք ասացաք զկարգն նոցին և զմիաբանութիւնն

ընդ իրեարս։ և զտոթրաձայնութիւնն և զպատճառն տիրելոյն նոցա ի Փանախանէն։ և զկէս պէս վշտակրութիւնն։ և զտարաշխարհիկ լինելն նոցա։ այսինքն Մելիք Ադամին։ և Մելիք Յովսեփին ի Հայրենեաց և զվերատին դարձն չարաբերթ։ Առաջինն Մելիք Ադամն կարողութեամբ հազար արանց պատերազմողաց։ (գիրմիդօրդ)։

Երկրորդն՝ Մելիք Յովսեփն սոյն սարասի։ և զսոյն երկուքս համաձայն ի յամենայն իրս և խորհրդականք և ըստ մեծի մասին յանձնիշխանք թէպէտ են ընդ հնազանդութեամբ Շօշու խանին։

Երրորդն Մելիք Եսային ըստ կարողութեան վերոյ Մելիքանցն սա կայն կարի նեղեալ ի նախանձուէ Մելիք Շահնազարին։ (դուզաղ)։

Չորրորդն՝ Մելիք Շահնազարն որ զօրացուցիչն է Տաճկաց և միաբան ընդ խանին։ ունի կարողութիւն և սա հազար արանց պատերազմողաց։ (վարանդ)։

Հինգերորդն Մելիք Միրզախանն և որդին ունին և սոքա կարողութիւն արանց պատերազմողաց մինչև։ (խաչէն)։

Մելիք Ալահվերդին որ է գռեհիկ և խղճաբարոյ ունի կարողութիւն արանց պատերազմողաց մինչև ցհինգ հարիւր։

Ի սոյն խաչենէ և Յովհաննէս կաթուղիկոսն Աղուանից։ որ Լանկթամուրն տարագրեաց զազգն Աղուանից։ և Հայք եկեալ բնակեցան ի նմին տեղւոջ։ և կաթուղիկոսն տեւեաց մինչև ցայսօր։

Աստէն պատմեցաք և զգլխաւոր իշխանութիւնն սրբազանից կաթուղիկոսացն ամենայն Հայոց որք ի սուրբ Էջմիածին։ և նոքա դրեցին։

Պատմեաց Աղայ Յովհաննէսն և մեր ուղղաշող միաբանութիւնն և զտէրութենէ նորոգելն և ոչընչիւ կորուսանելն։ Նաև՝ Դաւիթ բէգի զօրանալն և արիութիւնն։ և յետոյ վախճանին խափանիլն։ Հարցրին և զբարւոյն արքային Հերակլայ և զկարողութենէ նորին։ և զոր ինչ ասացաք զրեցին։ Որ վեց աղգաց զօրս գումարէ։ ի յՈսից։ Թուշից։ Փշաւից։ Քոռից։ Չերքէզից և Լակզեաց։ Են ի սորանէ որք հնազանդին նմա և են որք ի վարձու կալնու։ Այլև ունի ի տէրութեան իւրում բնակեալ Հայ և Տաճիկ։ և ի նոցանէ ևս առնու զօրս։

Զայս ամենայն զոր ասա նշանեցաք. ի յասելն Աղայ Յովհաննէսին նոքա ռուսերէն գրեցին։

Ծանուցաք և զայլի արանցն Սիսիանու և Ղափանու որք կարող են մինչև ցհազար անձն խանին տալ ի ժամ պատերազմի, որք թէպէտ էին յառաջ ընդ իշխանութեամբ Նախիջևանայ խանին, բայց այժմն ընդ իշխանութեամբ Ղարաբաղու խանին. զայս ևս գրեցին։

Փետրվարի 6 սրբազան Գաբրիէլ արքեպիսկոպոսն եկն ի տեսութիւն մեզ. զկնի ճաշու ժամու հինգ ժամուն, և մնաց առ մեզ մինչև 10 ժամն և ի մէջ գնացաք առ Աղայ Յովհաննէսն. և անտի յեկեղեցին և մեք ընդ նմա. շրջեցաւ յամենայն տեղիսն և ի վերնայարկսն. թէպէս դեռ ոչէր ընկալեալ զօծումն. բայց մեք զարդարեալ էաք յաղագս նորա։ Յոյժ հաւանեալ գովեաց զյարմար կերտուածս. սուրբ եկեղեցւոյն մերոյ. և անտի ելեալ ողջունեցաք ընդ միմեանս. և ապա գնաց ի մէջ։

Այն ամսոյ 10 գնացաք Կաղեթի կօրդուզն, ուր տպէին աստուածիւնն մեր. և անդ ընծայեցին մեզ մէկ դիրք որոյ անունն էր «Սէր հայրենեաց», որ Բռուսի թագաւորի արարեալն էր, և զմեր անունն փոքրիկ գրով տպեալ մեզ ետուն. և քանի մի պատկեր ևս և Նաամիր շահի պատկերն. որոյ վերակացուն էր մեր Եվրեմ արքիմանարիտ քվեր որդի Իգնատիէ Անտօնիչն։ Գործաւորացն ետուք ԲՌ. դիան. Պարոն Յարութիւն Դաւիթովն էր ընդ մեզ։

Այն ամսոյ 18, օծաք զեկեղեցին մեծաւ հանդիսաւորութեամբ յանուն սուրբ կուսին Կատարինէի յորում կցորդիւր և մեծ թագուհին։ Եկն պայծառափայլ քնեազ Գրիգոր Ալէքսանդրովիչ Պոտեմկին և ամենայն նախարարքն. և մեք գեղեցիկ արարողութեամբ հաճոյացուցաք զմիտս ամենից որ բոլորքն հաւանեցան բարեզարդ արարողութեամբ մերոյս եկեղեցւոյն. քարոզ էաք պատրաստեալ և ռուսերէն թարգմանեալ. յորժամ մեք կանգնեցաք ասել զքարոզն հայկական. զթարգմանեալսն բաժանեցին իշխանացն Ռուսաց. մինչև 500 հատ։ Մատուցաք պայծառափայլ քնեազին և վասն ողորմած թագուհւոյն որ յատկապէս էաք կազմեալ։ Նոյնպէս և

վան ժառանգչացն մեծ իշխան Պաւլ Պետրովիչին, և մեծ դշխոյ Մարիա Ֆեոդորովնային, զորս Աղայ Յովհաննէսի ձեռամբն մատուցաք ի տան վեղարազամ Գրաֆ Նիկիտայ Իվանիչ Պանինին. որք ընկալեալ յարգեալ էին :

Սոյն ամսոյ 25. ողորմածագունեղ թագուհին շնորհեաց մեզ պնակէ մի ձեռամբ պայծառափայլ քնեազ Պոտեմկինին շնորհակալելով զքարոզութենէ մերմէ զոր մատուցեալ էաք գովասանութեամբ :

Սոյն ամսոյ 28. քահանայ ձեռնադրեցաք զտէր Ստեփանն ի քահանայ ըստ խնդրոյ պայծառափայլ քնեազին. եկն բազում նախարարաց և դեսպանաց Եւրոպացւոց. ի նոյն օր մեծաւ հանդիսաւորութեամբ արկաք զվերոյ գրեալ պնակին ի պարանոց մեր, ասութիւն ինչ ասելով ի դէմս քնեազի շնորհակալութիւն վասն ցուցեալ շնորհացն Կայսերուհոյ միջնորդութեամբ իւրով :

Ապրիլի ամսոյ 25. սրբազան Գաբրիէլ արքեպիսկոպոսն Նովգորոդու, և Պետրոգրադու գիր գրեաց Սանկտպետերբուրքու բերթի սուրբ Պետրոս Պողոս Սրբոյն աւագ քահանային. որ եթէ գնամք ի տեսութիւն Սրբոյն պատուով ընկալնու զմեզ. գնացաք քանիւք մերաղնէիւք որ էր օրն շաբաթ. երկու շլուպայ էին դուրս առաքեալ իւրաքանչիւր 12 թիակովք և իբրև մերձեցաք ի ցամաքն ընդ առաջ եկն մայրաքաղաքի մի աջ առեալ խոնարհարար անկաւ առաջի մեր. և իբրև մտաք ի դուռն բերթին պատշաճաւոր փոքրիկ դուռնդ մի առեալ իւրեանց գնդապետաւն ի կարգի կանգնեալ էին ըստ օրինի իւրեանց. պատիւ եռուն մեզ : Եւ ի մերձիլն մեր ի դուռն սուրբ եկեղեցւոյն Աւագ քահանայն ընդ ուրթն քահանայից ընդ առաջ եղև մեզ և խոնարհեալ աջ էառ ինքն՝ և որք ընդ նմա էին։ Մտաք 'ի եկեղեցին երկրպագեցաք տաճարին և զբօսաք. համբուրեցաք և զգերեզմանս կայսերացն որք էին ի ձախակողմն եկեղեցւոյն մերձ ի դասն որք էին մեծն Պետրոս, կատարինէ առջինն. Աննայ Իվանովնն և Ելիսաբեթ Պետրովնայն. և ելաք ի սեղանն. և անտի ի հանդերձատունն տեսաք կահն և զկարասին. յորում գոյր մէկ մեծ գրչեայ աւետարան ոսկեսուփ և քարամբ կազմեալ. և մէկ պատուական ոսկեայ Սկիհ.

և Ոսկրեայ պատկերք տէրունական քանդակեալք ձեռամբ մեծին Պետրոսի. ելեալ 'ի եկեղեցոյն տեսաք և զձեռակերտնաւակն մեծին Պետրոսի և զամենայն գործս նորին. և անդի հրաւիրեաց զմեզ կամենդաթն նորին այսինքն բերթապանաց մեծաւորն ենարալ մայօռ Անդրեայ դարբիելիչ Զօրնիշոնն ի բնակութիւնն իւր և յոյժ յարգանօք ընկալաւ զմեզ ուսուցիչս, և բազում պատուադրական մարդասիրութիւնս նոցոյ: Ելեալ անդի եկաք նստիլ իկուրն նոյն մայօռն և աւագ քահանայն եկին մինչև ի յեղը ջրոյն մեծաւ ամբոխիւ. և ի յելանելն մեր ի դրանէ բերթինն նոյն զենուորքն նոյնով բազմութեամբ կային և նոյն պատիւն ետուն: Եւ ի նստիլն մեր 'ի կուրաջ առեալ մայօռն և աւագ քահանայն յետ դարձան և մեք օրհնելով զկայսերութիւնն եկաք ի տուն պարոն Մարգար Մանուչարեան ընդ եղբօրն իւրոյ պարոն Փիլիպոսին որ էր ընդ մեզ համար ընթաց և թարգմանիչ. որ և բատ պատշաճին ետ վարձ վարողացն զկուրս: Եկեղեցին էր երկայն և վեց սեամբ. և տաճարն յոյժ զեղեցիկ. և սեղանն յոյժ ընդարձակ, իսկ զանդակատունն յոյժ ահաւոր և բարձր 156 դաղ Ռուսաց այսինքն Հալարք:

Ի սոյն թուականն և ի մայիսի 1 պայծառափայլ քնեազն խընդրիլ էր զմեզ ի ցարսկի Սելօ առն մատուցանելոյ կայսերուհոյն. ընդ Աղայ Յովհաննէսին և ընդ Իւան Պետրովիչ Գօրի չին գնացաք շրջեցաք ի բուրաստանսն և տեսաք զզանազան մարմարոնեայ շինուածս արժանաւորս գովութեան. տունս բարձրաբերձ, արձանս և կամուրջս զեղեցիկս ի վերայ լճացն և ջրոյն զորս փորեալ ի գետնոյն Ծովացուցեալ են: Եւ ի երեքին գնացաք ի տեսութիւն Կայսերաժառանգ Պաւլ Պետրովիչին և մեծ դշխոյի Մարիա Ֆեոդորովնային շինեալ տունքն տեսաք որք հեռի ի ցարսկի սելօէն 4 վերստաւ: Եւ ի ամսոյս երեքին ի յաշխարհամատեան կիւրակէին պայծառափայլ քընեազն ի 8 ժամուն տարաւ զմեզ ի բնակութիւն իւր, որ անդ ցուցցէ մեզ կայսերուհւոյն. սակայն կայսերուհին առաւել ողորմութիւն արարեալ մեզ հրամայեցեալ էր ի պալատն արքունի տանել. ելին քնեազի քվեր որդի Կաւալէր Սամուէլն և ասաց թէ հրամայեաց Կայսերուհին առ ինքն գալ. անկաւ

առաջի մեր. և մեք զկնի և ընդ մեզ Աղայ Յովհաննէսն միայն և գնացաք ի վերն յորում ժողովեալք էին բազում իշխանք, և մեր երախտաւոր քնեազն եկն առ մեզ ծիծաղելով թէ ահա կատարեցի խոստումս. և իսկոյն ել Կայսերուհին խոնարհեալ գլուխս ետուք և գնացաք ձեռքն համբուրել առեալ համբուրեցաք. և ինքն խոնարհեալ գլուխս ետ մեզ և մեք իւրն և կանգնեալ առաջի ասացաք պատշաճաւոր բանս և Աղայ Յովհաննէսն պատմեաց թագուհւոյն. և ապա մեր ասութիւնն զոր ռուսերէն թարգմանեալ ունէաք մատուցաք մերով. զոր շնորհակալութեամբ ընկալաւ յետ այսորիկ կանգնեցաք և ասացաք թէ յետ ընկալելոյ զամենաբարձր հրովարտակացն Կայսերական մեծութեանդ, Սիմէոն սրբազան պատրիարքն ամենայն Հայոց չունելով իմիք պարտավճար լինիլ կայսերական մեծութեանդ, սահմանեաց զաղօթս զայս և եդ ի յեկեղեցիս մեր որ յաւուրս Շնորհալի տօնի քոյոյ մեծութեան. փառաւորեսցեն զԱստուած և խնդրեսցեն զկեանս օծելոյդ իւրոյ, և ապա մատուցաք զսրբազանի արարեալ տօնախմբութեան տետրակն զոր ընկալեալ եհարց զմէնջ և գլուխս ետ մեզ և մեք իւրն զգրեանս ինքն առեալ եմուտ ի սենեակն իւր. և զքնեազն կոչեաց առ ինքն ի ընթեռնուլ զգրեանս. և մեք ելեալ անտի եկաք ի Պետրպօլիս յոյժ խնդութեամբ։

Ի սոյն ամսոյ 8, դարձեալ գնացաք ի ցարսկի սելոյ վասն նորոյ հրաժարական ողջոյն տալոյ պայծառափայլ քնեազին, որ ելեալ գնամք, ասացեալ էր Իւան Պետրովիչ Գօրիչին և Աղայ Յովհաննէսին թէ մնասցէ մինչև յդառնալն մեր առաւելագոյն բարի է լինելոյ իւրն և կարելի է ռոճիկն աւելցուք։

Ի սոյն ամսոյ 5, ենարալ անշէֆ և կոլինէթի վերակացու Աղամ Վասիլիչ Ալսուգոմն որ բարեկամութիւն ունի ընդ մեր Պարոն Մարգարին Մանուչարեան ըստ խնդրոյ նորին զմեզ հրաւիրեալ էր ի տուն իւր վասն ճաշելոյ, որ և յոյժ յարգանաք ընկալաւ զմեզ, որպէս ինքն և նմանապէս և կինն իւր Մարիա Վասիլիէվնայն, և դուստր Նատալիէն. և որդիքն Սերգէ Աղամիչն և Միտր Աղամիչ։

Ի սոյն ամսոյ 9, օրն շաբաթ Կայսերուհին ելեալ գնաց ի յիշխանութիւնս Լեհաց, որ այժմէ ընդ իշխանութեամբ

իրեանց, լսեցաք իմիերատորն գալ պարսի անդ և թագաւորն Պռուսայ և թէ զինչ խորհուրդ ունին ծածկապէս առնեն ի յինքեանս՝ այժմ ի մէջ անյայտ է թէպէտ մարդիկք զանազան գատողութիւնս առնեն. բայց մեծ ինն է երկուց կայսերացն շարժիլ ի տեղւոջէ իւրեանց։

Ի սոյն ամսոյ 13 ի տանէ Պարոն Մանուչարեանց ընդ Պարոն Փիլիպպոսին գնացաք ի Յաթմիրալթի կալէկն տեսաք զզ մեծամեծ նաւս զոր կերտէին, և զդատաստանատունս. և զմեծ չարիսն զոր մով ձիով վարէին, և ի վերնարկս նորին գոյին բազում չարիք և բանվորք որք զնիւթս երկաթիս պատրաստ էին վասն նաւուց։

Ի սոյն ամսոյ 19 եղև մեծ հանդէս ի Պետրպօլք վասն զի կայսերուհին նոր օրէնք ինչ սահմանեալ էր և իշխանութիւն ի վերայ տեղեակաց էր բաժանեալ, որք անուանեն (նամեսնիկ) որովք կառավարութիւնն առաւել դիւրին լինիցին վասն ազնուականաց արքունին զդաստակերաց. և վասն վաճառականաց, զի դիւրաւ լինիցի վասն նոցա իրաւունք։ Ի սոյն օր հրատարակեցաւ օրէնքս այս ի քաղաքին, սակս որոյ ամենայն գինուորական գունդն անձնապահական զոր (գուարդի) անուանեն և պատերազմականքն զոր (վոյէնի) անուանեն։ Ի յամառան պալատէն կայսերական զոր (լեթնի-սադ) կոչեն, անտի ըմբռնեալ մինչև ի սուրբ եկեղեցին (կազանցկի) կանգնեալ էին պատերազմական զինուք երկ երկ դասիւք և իւրաքանչիւրքն երկու սիրայիւք. մինչև տեղականն Պետրպօլքու որ էր (Ֆրթմարշալ) գալէցին և դուբեռնաթն մեծ Վասիլիչ Վոլկով եկեալ անձին ի մէջ նոցա համառնային ազնուօքն և հասարակ վաճառականաքն և գնացին ի կազանու սուրբ Աստուածածնայ կոչեցեալ եկեղեցին վասն տեսանելոյ զպատարագ և երդումն առնելոյ մեալ հաստատութեամբ՝ և ի գնալն նոցա ի մէջ զօրացն, զօրքն ամենայն ըստ օրինի իւրեանց փող հարին, և իւրաքանչիւրքն չորք անգամ թնդանոթ արձակեցին պատուելով զտեղեակսն տեսութեան արժանաւոր հասդիսիւ. և ի յետ կոյսին քաղաքաղարդ հանդէս արարեալ բազում ճրագս ի փողոցս և ի հրապարակս վառեցին. և արձանս մեծամեծս խորհրդաւորս կանգնեալ. և ի վերայ նոցա զխորհրդաւոր նկարս

պատկերաց արարեալ. և բոլորն ճրագիւ վառեալ կամարակապք և բոլորակ ծաղկանիշ արուեստիւք որ ի մէջ դիշերի զերկինս պայծառադոյն ասեղացն բերէին զնմանութիւն, լուսափայլք նոցին, և մեր աղնիւ Աղայ Յովհաննէսն Եղիազարեան վասն լինելոյ նորին ի կարգի ազնուականացն Ռուսաց շինեալ էր յոյժ գեղեցիկ արձանս մեծամեծս մոմաշաղիւք. ի յորս նկարեալ զոյին անուանք կայսերական մեծութեանն նմանապէս և ժառանգաւորացն նորին : Հանդէսս զայս տեւեաց աւուրս ինն և ի կատարմանն որ էր ամսոյս 28 : Սրբազան Գաբրիէլ արքեպիսկոպոսն Պարոն Մանուչարեան Փիլիպպոսիւն զմեզ հրաւիրեալ էր գնալ ի Ղազանչիի կոչեցեալ սուրբ Աստուածածնին եկեղեցին վասն տեսութեան հոգևոր հանդիսին. որ և ընդ Պարոն Փիլիպպոսին գնացաք ընկալան զմեզ ամենայն եպիսկոպոսունքն և ամենայն հոգևորականքն յոյժ յարգանօք : Նաև սրբազան եպիսկոպոսն և ամենեքեան բատ սովորութեան Ռուսաց եկին ի համբոյր աջոյն մերոյ որպէս և մեք իւրեանց. և ի սեղանոջն կանգնեալ տեսաք զամենայն բարեվայելուչ հանդէսն. զքարոզն և զերգումն ընտրեալ գաւառաւորաց :

Ի սոյն ամսոյ 25 ընդ խօջամալ Պարոն Յովհաննիսին ի պալատն արքունի մերոյ ուխտիւքն եկեղեցականօք տեսաք զարմիտաշն այսինքն գերիարաձիգ տունսն զայնոսիկ յորս դրն պատկերաց սրբոց և անսրբոց հնոց և նորոց, տեսաք և այլադէմ բազում պատկերս, և թռչունս կենդանիս, և բազմազան նկարս քարանց պատուականանց արժանաւոր տեսութիւն, և անտի ի յեկեղեցին պալատի որ էր յոյժ զարդարեալ և կայր անդ բազում սրբոց մասունս և զգեստս պատուականս եկեղեցականաց. և այլ տունս տեսաք բազում զրեանս և այլ բազում ինչ. և պահապանացն պալատի եկեղեցւոյն շահեաց զրամով Պարոն Յովհաննէս խօջամալովն :

Ի սոյն ամսոյ 26 և 29 սրբազան Գաբրիէլ արքեպիսկոպոսն շնորհեալ էր մեզ երկու քարոզ դիրք տպագրականաց և իւր ասութեան տեարակն զոր յամսոյս 19-ին վասն նորոգ կարգադրութեան մեծ կայսերուհւոյ :

Ի սոյն ամսոյ 30 վեզիրաղամ Գրաֆ Իվանիչ Պանին հր-

բաւիրեալ էր զմեզ ի ճաշ։ գնացաք ընդ մեր աղնիւ Աղայ Յովհաննէսին Եղիազարեան առ որ եկն բազմութիւն նախարարաց ընդ որս էին և վիզկանցլար Գրաֆ։ և քնեազ Կուրակինն, ընկալաւ զմեզ յոյժ յարգանօք և քաջալերութեամբ։ մեք որպէս ի դիմաց մերոց։ նմանապէս և ի դիմաց սրբազան վեհին ողջունեցաք զինքն։ և ցուցաք զմեզ երախտագիտաբերութեան իւրոց։ Զկնի աւարտման սեղանոյն խնդրեաց ի մէնջ զի ժամ արարցուք որ եկեալ տեսցէ։ զի ի ժամ օծմանն եկեղեցւոյն մերոյ հիւանդ էր ինքն։ և մեք յոյժ հաճութեամբ յանձն առաք առնել։ և Աղայ Յովհաննէսն զամենայնսն խնդրեաց ի ճաշ զկնի ժամուն։

Յունիսի 2։ Համբարձումն երեքշաբաթի օրն ըստ խնդրոյ վեզիրազամ Գրաֆ պանինին վերոյ ժամ արարաք եկն ինքն բազում նախարարօք և խուռն ամբոխիւ մատուցաք զԱստուածային սուրբ պատարագ։ թարգմանեալ Խորհրդատետրին որ ունէր ի ձեռին և ընթեռնայր՝ յոյժ հաւանեցաւ բոլոր արարողութեան մերոյ։ Եւ գովեաց յոյժ, և կարի շնորհակալութեամբ շրջեցաւ ի սեղանն։ և հայեցաւ ի ճաշակումն մեր։ Մինչ սուրբ Աւետարանն վերաբերեցաւ բուրվառն տարան առ Պանին եկն ընդ վիզկանցլարին և ընդ քնեազ Կուրակինին և համբուրեցին զսուրբ Աւետարանն։ զկնի արձակման պատարագին եկին և ի համբոյր սուրբ Խաչին որոյ ետուք իւրաքանչիւրոյն նշխար մի զոր գոհութեամբ ընկալան։

Պիտի շարունակուի։

ԾՐԱԳԻՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ

ԵՒ

ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՆՐԱ ԱՅԺՄԵԱՆ

ՎԻՃԱԿԻՆ ՎՐԱՑ

ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ

ՎԵՑԵՐՈՐԴ ՇՐՋԱՆ

(1080—ից մինչև 1393 Քրիստոսից յետոյ)

Այս շրջանս մեր յառաջն է հանում մի նոր թագաւորութեան հետ միասին և մի հետաքրքրելի թուական, որոյ միջոցումը Հայաստան Արևմտեան քրիստոնէից հետ ուղղակի յարաբերութիւններ է ունենում։ Ռուբէն Դ-ի մերձաւոր ազգականը և նրա ցաւերին հաղորդակիցը, տկանատես լինելով նրա անպատուութեամբ սպանուելուն՝ ցաւած և զայրացած սրտով Տորոսի սարերն է քաշուում, ուր տեղ արդէն հազարաւոր Հայեր ժողովուած էին։ Կիլիկիային շատ անգամ տիրել էին Հայաստանի թագաւորները, որոնք միմիայն Եփրատ գետովն է բաժանուած և այս ժամանակներում փոքր Հայոց մասն էր կազմում։

Հայոց՝ Կիլիկէում առաջին անգամ հաստատուելու ժամանակը շատ հին լինելուն համար, երբ լինելը չգիտացուիլ։

Հայք այս տեղն են եկել մի մասամբ Փիւնիկեցւոց և Եգիպտացւոց հետ առուտուր անելու, մի մասամբ էլ Արամին և Տիգրանին հետ և վերջին անգամն էլ մի ապաստարան դրտնելու Արաբացւոց և Յունաց տուած նեղութեանց և հալածանաց դէմ: Բոլոր այս պատճառներն աճեցրել էին ինն-երորդ և տասներորդ դարերումը Կիլիկէումը ապաստանող Հայոց թիւն, արդէն այն տեղ Հայք Ռուբէնը չհասած, մի քանի անկախ իշխանութիւններ ունէին:

Ասացինք, որ Գագիկ 1079 թուին սպանուել էր: Յաջորդ տարին Ռուբէն, Գող Մկանուանեալ Վասիլի, Աբիրատի և Տարսոնի մօտերումն եղած Լամբրոն բերդի հրամանատար Օշինի օգնելովը, սկսաւ Տաւրոսումի տիրապետութիւնը հաստատել: Մինչև այն ժամանակն այն տեղ բնակող Յոյները մի մասամբ բնաջինջ եղան և մի մասամբ էլ դուրս քշուեցան և Ռուբէն խաղաղութեամբ երկրին տէր եղաւ մինչև իր մեռնելը, որնոր 1095 թուին պատահեցաւ[1]: Կոստանդին Ա. իր որդին, իրան յաջորդեց և 1095-ից մինչև 1100 թիւը տէրութիւն վարեց: Սա իր երկիրներն ընդարձակեց Յունաց ձեռից առնելով. նրանցից մի քանի ամուր բերդեր էլ խլեց, որոնց մինն էր Վահկայ, որնոր կառավարութեան գլխաւոր տեղն եղաւ:

Խաչակիրներու պատերազմը, որ արևմտեան քրիստոնեայք այն ժամանակ արևելքում սկսան, որչափ որ սկզբումը նպաստաւոր եղաւ Ռուբէնեան թագաւորութեան հաստատութեան և ընդարձակութեան համար, այնչափ յետոյ վնասակար և ավերաբեր եղաւ: Կոստանդին Ա. արևմտեան քրիստոնեայքն իրրև եղբայր ընդունեց, նրանց հետ ուխտ դրաւ դաշնաւոր և բարեկամ լինելու, և նրանց մեծամեծ ծառայութիւններ մատուց, Անտիոքի պաշարման բոլոր ժամանակը խաչակիրք Կոստանդինից, ոչ թէ միայն օգնութիւն ընդունեցին, այլ առատ պաշար և պարէն, որոնք ի նշան երախտագիտութեան Կոստանդինին Մարքիսի տիտղոս տուին:

Թորոս Ա. իր հօրը Կոստանդնին յաջորդեց, որ 1100 թուին մեռաւ: Սա կառավարեց Կիլիկիան, (որնոր այսու հետ

1 Զուր է որ Թ. Դէլբար այս թագաւորութեան հիմնադրին անուանում է Ֆիլարէտ Բրագանս, Բառ. գիրք խօսակցութեան և ընթերցանութեան, հատ. Գ. 5-դ բաժին, երես 133—139.

տեւ անխտիր կամ Կիլիկիա կամ Հայաստան կանուանենք) մինչեւ 1123, որ եւ է իր մեռած ժամանակը։ Թորոս Յունաց ձեռից Կիլիկիայից դուրս մի քանի քաղաքներ առաւ, որանց մէջն էր եւ Գալիսպրա, ուր տեղ սպանեց Գակայ սպանողներին։ Գող Վասիլի օգնութեամբ Սելճուքեանց եւ Թուրքմէններուն յաղթեց, որոնք կամենում էին Կիլիկիոյ դաշտավայրերը արշաւել արեւելեան եւ հարաւային կողմից, Թորոս իրանից ուղիղ ժառանգ չթողուց, իր եղբայրը Լեւոն Ա. 1123 թուին կառավարութեան սանձն իր ձեռքն առաւ եւ Կոստանդնուպօլսում 1141 թուին բանտին մէջ մեռաւ։ Լեւոնի առաջին անգամ Յունաց հետ արած կռիւները յաջող գնացին։ Շատ անգամ կայսերական զօրքերուն յաղթեց եւ նրանց ձեռից Միսիս, Տարսոն եւ Սարուանտիկեար քաղաքներն առաւ, որոնք իր երկիրները շատ ընդարձակեցին։ Բանգրագ Հայկազն իշխանը Բաղտինը Կոդիբուա դը-Բուլլոնի եղբայրը Եդեսիան առնելու[1] տարաւ, ուր տեղայ Յոյները դուրս քշեցին եւ օգնութեան հասաւ Ռոդերիոսի, Անտիոքի կառավարութեան խնամակալին Սարակինոսաց դէմ եւ Աղաղ քաղաքն առաւ։ Լեւոնի եւ Մարաշու իշխան Բաղդինի մէջ մի վէճ բացուելով մի կռիւ հետեւեցաւ, որու մէջ վերջինը յաղթուեցաւ. սակայն երեք տարի յետոյ Լեւոն դարանի մէջ բռնուելով, օրնոր Բաղդին էր լարել նրա համար, Անտիոք տարուեցաւ եւ այն տեղ բանտ դրուեցաւ։ Լեւոն բանտից ազատելու համար Բոհեմոնտին Ատանա, Միսիս, եւ Սարուանտիկեար քաղաքներն ու 60,000 դահեկան տուաւ. բայց երբ ազատութիւն գտաւ տուածները ետ արաւ եւ Անտիոքի դաւառն տակնուվրայ արաւ։ Բէյմոնդ Բոհեմոնդի յաջորդը, Յովհաննէս Կոմնենոս կայսերից ստիպուած Լեւոնի հետ խաղաղութիւն անելով դաշնակցութիւն հաստատեց։ Լեւոն դնաց Սելեւկիա քաղաքը պաշարեց, որնոր դեռ երեւելի քաղաք էր եւ Յունաց կայսեր էր պատկանում, այս արգելքն Բէյմոնդին ազատեց, բայց պատճառ էլ դառաւ Հայաստանի մեծամեծ ձախորդութեանց։ Յովհաննէս Կոմնենոս բազմաթիւ բանակի գլխին անցկացած Լեւոնի տէրութեան մէջ մտաւ։ Միսիս, Տարսոն եւ Ատանա, Յախուտ, Ամանիք, Խալիճ յանձնատուր ե-

1 Կուլլիելմոս Դ. 1—3։

զան կայսեր, որ եկաւ Անարզաբայի[1] յառաջը դրաւ բանակը։ Այս քաղաքն երկար ժամանակ ինքն իրան պաշտպանելուց յետոյ առնուեցաւ և իր բնակիչներին մի մասն էլ սրից անցկացաւ։ Անարզաբայի առումը Վահկայ[2] քաղաքին առնուելուն պանձառ եղաւ, որու առջևը պաշարողները շատ մարդ կորցրին։ Ի վերջոյ Լևոն ինչպէս նաև Ռուբեն և Թորոս իր որդիքը, զէնքերը թողուցին և 1136-ին անձնատուր եղան, որոնք կայսրը կոստանդնուպոլիս տարաւ, Ռուբենը շուտով աչքերի լոյսը կորցրուց և սպանուեցաւ, Լևոն գերութեան տանջանքներով մեռաւ։ Իսկ Թորոսը ազատութիւն գտնելով իր հօրը մեռնելուց յետոյ, բանակը ընդունուեցաւ, ուր տեղ իր քաջութեամբն անուն հանելով բարձր աստիճաններու հասաւ։

Այս միջոցումը, Կիլիկիոյ վրայ յարձակեցաւ մի Էմիր, որուն անունն էր Ահմէտ-Մալէք կամ Մէլիկ, որ Ցունաց ձեռից առաւ Վահկայ, Կապան և մի քանի տեղեր։ Այս դէպքը մի նոր պատերազմ յառաջ բերաւ և Յովհաննէս Կոմնենոսը ճանապարհ ընկաւ դէպի Կիլիկիա. մի և նոյն միջոցին Թորոսն էլ Կիլիկիա եկաւ[3], կայսրն այս արշաւանքին մէջ մեռաւ, Թորոս գնաց և իր ազգիցը մի քահանայ դուռ և նրան իրան ով լինելը խոստովանեցաւ։ Այս քահանան իր ազգակիցներուն իմաց տրաւ բանը, որոնք նեղացած լինելով Ցոյներից մեծ սիրով ընդունեցին Թորոսին։ Բաղմաթիւ Հայք շուտով շտապեցան ու հաւաքուեցան դրօշակների տակին և Թորոսը նրանց գլուխն անցկենալով, յարձակմամբ Վահկայ, Միսիս, Ատանա, Անարզաբա, Թիլ, Ամուլթ և Սմանքալ, Ռուբիճ և ուրիշ քաղաքներն առաւ։ Այս քաղաքներից Ցոյները դուրս քշուեցան և ոմանք էլ ջարդուեցան և Հայաստանի անկախութիւնը նորունց հաստատուեցաւ 1144-ին։ Մանուէլ Կոմնենոս Թորոսի յառաջանալուն վրայ նեղանալով, շտապեց վերջ տալու Մահմատանի հետ ունեցած կռուին և իր ամբողջ բանակովը ճանապարհ ընկաւ Թորոսին դէմ գնալու և կռուելու։ Կայսրը

1 Հներից Կեսարիա, Անազարբոս։

2 Բարդա։

3 Պատմագիրք, Թորոսի Կիլիկիա դառնալու մանրամասն պատմութեան վրայ համաձայն չեն իրար հետ։

անձամբ զինուորական դործողութիւնները կառավարելով յաջողեցաւ Ատանա և Տարսոն քաղաքները ձեռք բերելու։ Յետ դառնալիս իր քեռորդի Անդրոնիկոս զօրապետին յանձնեց պատերազմը շարունակել, մինչև որ Թորոսին իր ձեռքը բերէ։ Կայսրը, Անտիոքի վրայ տիրող իշխանին Բ.ենո-ը Շատիյլիոնին էլ հաւանութիւնը ստացաւ իր զօրապետին օգնելու։ Թորոս Բարձրբերդումը ամրացած ամէն յարձակումներից իրան պահպանեց։ Իր յաջողակ ձեռնարկութիւններովը շատ անգամ յաջողեցաւ զարնել Անդրոնիկոսին և նրա բանակը ցրուել։ Յունաց զօրապետները դերի ընկնելով վաճառուեցան խաղաղութիւնն էլ հաստատուեցաւ Մանուէլի և Թորոսի մէջ Բ.ենո-ը Շատիրլիոնի միջնորդութեամբը։ Նուրէդդին Հալէպի Սուլթանը մի քանի անգամ զարկել էր խաչակիրներին Ասորիքումը և նրանց ձեռից մի քանի տեղեր էր առել։ Բաղդուինոս Գ. Երուսաղէմայ Թագաւորը, կամենալով այս Էմիրին ընթացքը կանգնեցնել, խնդրեց և ձեռք բերաւ Թորոսի դործակցութիւնը։ Կեսարիան յարձակմամբ առնուեցաւ 1159 թուին քրիստոնեայներից և Նուրէդդին յետ մղուեցաւ։ Թորոս երբ իր երկիրներումը դարձ արաւ, իմացաւ որ Յոյները, իրա բացակայութեան ժամանակ դաշնադրութիւնն աւրել էին։ Չէնք ձեռք առաւ և նորունց նրանց ձեռից յետ առաւ Տարսոնը, Անարզաբան, Մոպսուէստիան, Ատանան և Սիսն ուրիշ ծովեզերեայ քաղաքներով։ Մանուէլ կատաղելով այս համբաւին վրայ, երկրորդ անգամ նրա դէմ յուղարկեց Անդրոնիկոսը, երբ Յոյն զօրապետը բոլոր իր զօրութեամբը Մոպսուէստիան զարնում էր Թորոս նրա վրայ մի զօրեղ յարձակում անելով, Ջարդ ու փշոր արաւ նրա զօրքը և մի կատարեալ յաղթութեան պսակ տարաւ։ Յոյները յաղթուած շատ մարդիկ կորցրին[1] և իրանց զօրացը մնացորդը Անտիոք քաշուեցուս կոտորածից պրծնելու։

Անդրոնիկոսի յաղթությունը Մանուէլի մի մեծ տպաւորու-

1 Կիննամոս այս պարտութիւնը Անդրոնիկոսի անհոգութեանն է տալի։ Նիկէ Քոնիադէս երկու պարտութեանց վրայ է խօսում, մինն օր տեղի ունեցաւ Մոպսուէստիոյ զօրաց դէպի դուրս յարձակելիս, միւսը մի կարդաւոր ճակատամարտումը։ Վահրամ Հայ պատմագիրը, համաձայն է գալի Կիննամոսի հետ Յունաց յաղթուելու պատմութեան մասին։

թիւն արաւ, բայց իր ամբարտաւանութիւնը էլի չկոտրեց։ Կալամանոս, կայսեր ազգականը ղրկուեցաւ Հայաստան Անդրոնիկոսի արած կորստեանը հատուցումն առնելու համար, բայց Տարսոնի նշանաւոր ճակատամարտը, որնոր տեղի ունեցաւ երկու բանակներու մէջ սոսկալի եղաւ Ցունաց համար և մշտնջենաւոր կերպով հաստատեց Հայոց տիրապետութիւնը այս երկրիս վրայ։ Կայսերական բանակը ամէն կողմից մղուելով, ցիր ու ցան եղաւ և Կալամանոս գերի ընկնելով, իր տիրոջը վաճառուեցաւ մեծ գումարով։

Այսպէս, բոլոր Կիլիկիան Թորոսի իշխանութեան տակն ընկնելով, Ցոյներն էն տեղաց դուրս եկան։ Թորոսի մի փոքր յետոյ Խաւրիոյ մէջ արած արշաւանքն էլ բարի վերջ ունեցաւ։ Այս գաւառն էլ նուաճուեցաւ և Հայաստանի հետ միաւորուեցաւ։ Իկոնիոյ սուլթանները հին դաշնադրութեանց զօրութեամբ, մինչև այս ժամանակ Թորոսի հետ դաշնակից բարեկամ էին։ Սակայն Մաքսուտ[1] Մանուէլի պարգևներով հրապուրուած, այս դաշնադրութիւնը կտրեց և եկաւ Թիլբերդին առաջը, որնոր Անազարբայի մօտն էր բանակը դրաւ։ Այս անգամ Թորոս ուրիշ բաղդ ունեցաւ. սուլթանի բանակին մէջ մի սոսկալի ժանտախտ ընկաւ, մեծ ջարդ արաւ զօրքերի մէջ։ Եաղուպ, Սուլթանի որդին, որ մի բանակի գլուխն անցկացած ասպատակութիւն էր անում դէս ու դէն, բռնուեցաւ և սպանուեցաւ Թորոսի եղբայր Ստեփանի ձեռքով և իր բանակն էլ ջարդուեցաւ։ Իսկ Թորոսն ինքը Սելճուքեանց ահրելի վիճակն առիթ բռնելով, Իկոնիոյ երկրումը մտաւ և տակն ու վրայ արաւ։ Յետոյ իր արած աւարն գերիների հետ միասին իբրև ընծայ Սուլթանին ղրկեց։ Այս տարօրինակ դործքի հետևանքն այն եղաւ, որ Սուլթանը խաղաղութիւն արաւ Թորոսին հետ ու իր երկիրը քաշուեցաւ։ Բայց հետնուհետն էլի Սուլթանը, անշուշտ վրէժն առնելու մտքով իր որդւոյն մահուան և զօրքերի կորստեան, Թորոսի երկիրներումը մտաւ, բայց նորունց յաղթուելով պարտաւոր եղաւ խաղաղութիւն անելու։

Թորոսի եղբայր Ստեփանի սպանումը, որ Մարաշի կշտին եղած մի փոքր բերդի վերակացու Անդրոնիկոս Եւփերբենոսի

1 Ըստ Սմբատայ։

ձեռքով եղած է, ասումէին, նորունց ստիպեցուց Թորոսին զէնքը ձեռին առնել: Եւ փերբեռնոս յաղթուեցաւ և իր բերդն երկիրներովը միատեղ, որ Ցունաց վերջին ապաստարանն էր, Հայաստանի հետ միացաւ: Այսչափ յաջողութիւններից քաջալերուելով Թորոս, մի փոքրիկ նաւատորմիզ ճարեց և Անտիոքի իշխանին հետ միաբանութեամբ գնացին Կիպրոս կղզին ասպատակելու, և յիրաւի կրկուսն էլ բարբարոս և անգութ գործքեր արին այն տեղ:

Մանուէլ Կոմնենոս, էլ յոյս չունենալով նուաճել Թորոսին ոչ իր զօրապետներու ձեռքով և ոչ էլ իր դաղանի նենգութիւններովը, որոշեց որ ինքը գնայ Կիլիկիա, որպէս զի անձամբ Թորոսի առաջն առնէ: Բայց Թորոսն իմանալով կայսեր դիտաւորութիւնը իրա խորհրդատու Թովմաս և Գրիգոր զօրապետներու հետ միասին հարկ եղած դգուշութիւններն առաւ իր անձնական պահպանութեան համար: Մանուէլ շուտով քշելով իր ընթացքը վրայ հասաւ և տէր եղաւ Ղամս, Սիսդրամոն, Անազարբա, Ղնժինիատոն, Թիլ Տարսոն քաղաքներուն: Բայց Երուսաղէմայ թագաւորին միջնորդութեամբ խաղաղութիւն արաւ Թորոսին հետ և Թորոս այս պատճառով Նրան յետ դարձուց Կիլիկիոյ մի քանի քաղաքներր: Այս խաղաղութիւնն եղաւ 1159 թուին: Թորոս էս ժամանակից սկսած Կիլիկիոյ մի մեծ մասին հանդարտութեամբ տէր լինելով Սեբաստիոսի տիտղոսը կրեց իր վրայ և իր կեանքին մնացած ժամանակը իր երկիրներուն կարգաւորութեան և երջանկութեան համար անցկացրուց:

Թորոս 1168 թուին վախճանեցաւ 24 տարի տէրութիւն անելուց յետոյ, ժառանգ թողուց իր Ռուբեն որդին, որ դեռ մանուկ էր Թովմասին խնամակալութեան տակ, որուն մի տարուց յետոյ Թորոսի եղբայրը Մլեհ դուրս արաւ: Իսկ Ռուբենն աղատուեցաւ Հռոմկլայ կաթուղիկոսաց բնակութեան տեղը փոխադրուելով և ուր տեղ էլ մեռաւ: Իսկ անօրէն Մլեհը իր 1169-ից մինչև 1174 թիւ արած տիրապետութիւնը պղծեց իր անպիտութիւններովը: Միքայէլ Բրանաս դքսին, և Եւփրբեռնոս ու Կալաման Ցունաց զօրապետներուն յաղթեց: Մանուէլ Կոմնենոս տեսնելով իր բանակին յաղթուիլը, Մլե-

հին հետ մի խաղաղութիւն արաւ, որնոր շատ շահաւէտ եղաւ Հայաստանին համար։ Իսկ ինքը Մլեհն իր հպատակներուն ատելի լինելով իր անգթութիւններովը իր գօրքերէն սպանուեցաւ 1174 թուին Սիսուն։

Մլեհի մեռնելուց յետոյ, իր եղբօրորդին և Թորոսի եղբայր Ստեփանոսի որդին Ռուբէն Բ-ը գահը բարձրացաւ և իր բարի բնութեամբը իր ժողովրդեան սէրը գրաւեց։ Բոհեմոնդ Գ. Անտիոքի իշխանն էլ չկարող ըլլալով Տարսոնը պահպանել Ռուբենին յանձնեց նրա հետ դաշնակից ըլլալով։ բայց Լամբրոնի իշխան Հեթումի թելադրութեամբը, որ այս միջոցին պաշարուած էր Ռուբենից, Բոհեմունդը բարեկամներէն տեսութիւն անելու հրաւիրեց Ռուբենին և ընդդէմ մարդկութեան իրաւանցը բռնեց նրան և բանտարգել տուաւ։ Բոհեմունդ մի փոքր ժամանակ Կիլիկիան էլ ձեռք բերելու եղաղեց, բայց Ռուբենի եղբօր Լևոնի քաջութիւնները բոլոր այս դիտումներները ցրեցին և սարսափեցրին իրան իր բանտարկածն էլ թողելու[1]։ Իսկ Հեթում Ռուբենի տանջանքներին առաջին պատճառը, հպատակեցաւ և ներողութիւն գտաւ։ Ռուբեն երբ իր ժողովրդեան գլուխն անցկացաւ իբրև հայր կառավարեց։ Մի քանի քաղաքներ և վանքեր շինել տուաւ և իր հպատակներուն վիճակը լաւացրեց, և ձանձրանալով աշխարհային գործքերից, իր եղբօրը Լևոնին յանձնեց կառավարութիւնը, և ինքը գնաց մի վանքումը քաշուեցաւ և ուր տեղ 1177-ին մեռաւ։

Լևոն Բ-ի տէրութիւնը երկար և յաջող տևեց (34 տարի) և յաւիտեան յիշատակելի մնաց Հայաստանի պատմութեան մէջ, քաջ և յաջողակ զօրավար լինելով և սաստիկ վարքով ու բարքով քրիստոնեայ և փառք սիրող թագաւոր իր երկիրներն ընդարձակեց, իր թշնամիներին յաղթեց, հիւրանոցներ, հիւանդանոցներ և որբանոցներ ու ուսումնարաններ շինել

1 Սմբատ ասում է, որ Ռուբեն ինքն էր գնացել Անտիոք ընակիչների բարուց ապականութենից հրապուրուած և որու խրատի ձեռքով բռնուելով բանդ էր դրուել, և իր աղաստութիւնը Սաբանտիկեար։ Թիւ, ձէքէր ամուր տեղուանքները 1000 դահեկան էլ ոսկի տալով ազատել էր։

տուաւ, ճանապարհներ բաց անել տուաւ, երկրագործութիւնը վաճառականութիւնը և նաւարկութիւնը յառաջացրուց և իր գահը նորանոր իմաստուն բարեկարգութիւններով փառաւորեց և իր անունն էլ Եւրոպիոյ արքունեաց հետ յարաբերութիւններ անելով հռչակեց։

Ռուսդէմ, Թիւրքմէններու Էմիրը, խաղաղութեան ժամանակ յանկարծ յարձակել էր Հայոց երկիրներուն վրայ և յաղթելով դէպի յառաջ էր եկել մինչև Սիս, բայց Լեւոն դէմն ելաւ զարկաւ նրան ցրուեց նրա բանակը և Էմիրն էլ իր մահը գտաւ կռուին մէջ։ Մի փոքր յետոյ Բերիոյ և Դամասկոսի Սուլթանները իրանց զօրքերը հաւաքած եկան Լեւոնի երկիրներու մէջ ասպատակ սփռեցին, բայց երկուքն էլ մեծ կոտորածով ետ մղուեցան։ Այն ժամանակ Լեւոն իր տէրութեան սահմաններու վրայ բաղմաթիւ ամուր բերդեր շինել տուաւ և նրանց մէջ մշանջենաւոր զօրքով լցրուց, նորունց խաւարիան առաւ որ իր նախորդներու ժամանակ Իկոնիոյ Սուլթաններու իշխանութեան տակն էր ընկել առ ժամանակ։ Երբ Հայաստան այպէս իմաստուն ձեռքով կառավարուելով խաղաղութեան բարիքներ էր վայելում, Ասորիքն ու Պաղեստին ներքին երկպառակութիւններով սպառակտուած մի աղիողորմ տեսարան էր դառել։ Երուսաղէմ սուրբ քաղաքը, քրիստոնէից ձեռքից առաւ 1187 թուին հռչակաւոր Սալահ-էտտին[1]։ Սա Հայաստան էր ծնել։ Փռեդերիկոս Բ. Երուսաղէմայ օգնութիւն հասնելիս Իկոնիան Ղըլըճ-Արսլանի ձեռից առնելուց յետոյ Լեւոնի երկրին մէջ մտաւ և խնդրեց նրան, որ իրան օգնական լինի իր ձեռնարկութեան մէջ, նրան փոխարէն թագաւորական թագ խոստանալով։ Լեւոն անմիջապէս Փռեդերիկոսին անբաւ պաշարեղէն զրկեց, որոնցից խոշակիրք շատ պէտք ունէին և ինքն էլ պատրաստուում էր նրան դիմաւորելու համար գնալ երբ լսեց, որ կայսրը դժբաղդութեամբ խեղդուել էր Կալիկատնոս գետումը[2]։ Նրա որդին Փռեդերի-

1 Նասէր-Սալահ-էդ-դին հարաւային Հայաստանումն է ծնել.

2 Այսօր Կէօք-Սու է սուում, որ թափուում է Միջերկրական ծովուն մէջ, Սելեւկիոյ առաջին, կամ թէ նորերու Սելեւքէ սուած քաղաքին առջև,

կոս Սուաբիոյ դքսին Լևոն մեծ փառաւորութեամբ ընդունելութիւն արաւ։ Հենրիկոս Դ. Գերմանիոյ կայսերական գահին վրայ բարձրանալիս, իր հօրը խոստմունքը կատարեց և Լևոն Բ. Տարսոնումը թագաւոր օծուեցաւ, Յունուար 6-ին 1198 թուին, Գրիգոր Զ. կաթուղիկոսի ձեռքով։ Ալէք-Անդրոսը ցանկանալով Լևոնի բարեկամութեանը և Գերմանիոյ կայսեր օրինակին հետևելով՝ նրան մի թագաւորական թագ ղրկեց։

Այս դէպքից յետոյ, մի երկար թղթակցութիւն եղաւ, մին կողմանէ, պապերու և նրանց երուսաղէմումունեցած տեղակալներու և միւս կողմանէ, Հայաստանի կաթուղիկոսներու և թագաւորներու մէջ։ այս թղթակցութեան նպատակն էր հաւատքն և հայկական եկեղեցին իրար հետ միաւորուել։ բայց այս ջանքերն ի դերև ելան և յետոյ շատ վնասակար եղան Հայաստանին։ ինչպէս որ պիտի տեսնենք հերետիկներորդ դարու վերջերումը։ Երևումէ, որ այս բանակցութեանց մէջ, փառասիրութիւնը մի աւելի մեծ պաշտօն էր կատարում քան թէ բուն կրօնի շահը։ Հռոմ մի բացարձակ տիրապետութիւն ունենալ էր կամենում. Հայաստան էլ բնականաբար իր անկախութիւնը պաշտպանելու էր հետամուտ։

Անգղիոյ թագաւոր, Ռիդարտոս Ա. դէպի Արևելք հասնելու ժամանակ, Լևոն դնաց նրան դիմաւորելու և Գերմանիոյ կայսեր արած փառաւոր ընդունելութեան նման, նրան էլ արաւ։ Լևոն մի արտօնութեամբ, որնոր տուել էր 1201-ին Գենովացոց, իր վաճառականութիւնն ընդարձակեց Եւրոպիումը[1]։ Կիպրոսի թագաւորին, քոյրն իրան կին արաւ և 1219-ին իր աղջիկն էլ Մաճառստանի Անդրէաս թագաւորին, Անդրէասպրուոյն տուաւ[2]. այս աղդակցական խնամութիւններով իր աղգն արևմտեան քրիստոնեայներուն մօտեցրուց։

Երկու մեծ կռիւ, որ ծագել էին Հայաստանի թագաւոր Լևոն Բ-ի և Անտիոքի իշխանին մէջ, երկար ժամանակ այս երկու եր-

1 Դրամագիտ. Հայաստանի, մէջին դարումը, Պ. Վիկտոր Լանգլուայի. երես 49։

2 Ցիշատակարանների ժողովածոյ Հայաստանի պատմութեան համար Մոսկուա 1838. հատ. Բ. եր. 48։

կիրներու խաղաղութիւնը վերադարձուցին։ Բոհեմունդ, այս երկու տէրութեանց սահմանները նշանակելուց յառաջ եկած վէճը վերջացնելու համար, Լևոնին առաջարկեց մի բանակցութիւն անել։ Լևոն վախենալով մի նոր որոգայթից, ինչպէս որ Անտիոքի իշխանը լարել էր իր նախորդներից մէկին, իր կարիճ հեծելազօրայ մի վաշտով նրա մօտ գնաց։ Այս գողութեամբ, ոչ թէ միայն պրծաւ այն որոգայթից, որ Բոհեմունդ իրօք լարած էր ունեցել այլ բռնեց նրան և Հայաստան բերաւ։ Շամբանեայի դուքս Հենրիկոսը, որ այս ժամանակ Երուսաղէմի խնամապետն էր, միջնորդութիւն արաւ և այս վէճը հանդարտացրեց յօգուտ Լևոնի, և Բոհեմունդ իր ազատութիւնը ձեռք բերաւ։ Այս երկու արքունեաց միջ բարեկամութիւնն ամրացնելու համար, Բայմոնդ Գ. Բոհեմունդի անդրանիկ որդին, Լևոնի եղբայր, Ռուբենի Ալիզա աղջկան հետ ամուսնացաւ։

Անտիոքի իշխանութեանը յաջորդութեան առթով մի երկրորդ վէճ բացուեցաւ, որնոր շատ աւելի երկարատև, սաստիկ և արիւնալի եղաւ։ Բայմոնդ Գ. մեռնելիս 1199-ին մի որդի թողուց Ռուբեն անուն, որնոր Ալիզայից էր ունեցել և Բոհեմունդ իրա պապը, իրան ժառանգ էր արել և այս ժառանգին Անտիոքացիք երդումներ կերել հաւատարիմ մնալու։ Բոհեմունդի մեռնելուց հետոյ, Բայմոնդ Գ. Միսկանի մականուանեալը, իրա երկրորդ որդին Տրիպոլսոյ կոմսը, Տաճարականաց և Ասպնջականաց հետ միաբանելով Անդիոքին տիրեց ի վնաս Ռուբենի, որ էր օրինաւոր ժառանգ և իր սանն ու եղբօրորդին։ Բայմոնդ բանն աւելի հեռուն քշեց, իր պահանջմունքներն Անդիոքի վրայ պաշտպանելու համար պատերազմ բաց արաւ Լևոնի դէմ։ Լևոն շատ անգամ Բայմոնդին զարկաւ, յաղթեց և Անտիոքի վրայ դիմեց և արաւ այն 1203 Նոյեմբերի 11-ին և այն տեղ իր եղբօրորդին Ռուբենը գահին վրայ նստեցուց։ Բայց երբ ինքը իր երկիրները դարձաւ, Բայմոնդն Անտիոքն ետ առաւ և Ռուբենին նոյն տեղաց դուրս արաւ։ Վերջապէս Բայմոնդ Լևոնին անկարող անելու համար՝ որ Ռուբենի իրաւունքները չպաշտպանէ, միշտ Տաճարականաց հետ միաբանելով զօրութեամբ Ռուդնատին,

Իկոնիոյ Սուլթանին որսաց և կարող եղաւ նրան, պատերազմ բաց անել տալ ընդդէմ Լեւոնի։ Բայց չարն իր ծայրն հասցնելու համար «Խաչակիրներու եկեղեցականները, որոնք ոչ կարգաւորութիւն և ոչ բարեպաշտութիւն ունէին[1]» վիճին մէջ խառնուելով. ևս առաւել խառնամնթոր արին, հռովմէական քահանայապետին տեղեկանալով մի քանիսը, նենգաւոր յաջողակողէն որսած լինելով Լեւոնին և նրա թագաւորութեան վրայ նզովք կարդացին, որոնց վրայ ոչ մի իրաւունք և ոչ մի իրաւասութիւն ունէին։ Հայոց եկեղեցականները համոզուած լինելով թագաւորին պաշտպանած բանին արդարութեան և պապի տեղակալներու այսպիսի նիւթերու մասին դատաւոր լինելուն իրաւունք չունենալուն վրայ, զայրացմամբ նզովքը մերժեցին։ Լեւոն իր եկեղեցականներից և ժողովրդից պաշտպանուած զէնքը ձեռին առաւ։ Նախ Իկոնիոյ Սուլթանին յետ մղեց քաջութեամբ. յետոյ գնաց երկրորդ անգամ էլի պաշարեց Անտիոքն, որնոր 1211-ին առաւ։ Եւ Ռուբենին բոլորովին իր տեղը հաստատեց, որուն հայրապետն և երկրին իշխանները հպատակեցան։ Լեւոն երբ իր երկիրը դարձաւ այն տեղից մշանջենաւոր կերպով Տաճարականներին դուրս արաւ նրանց սեպհականութիւնները գրաւելով. որոց մէջն էր և Գասդոն բերդը։ Սիսն էլ մեծայրուց և զարդարեց և իրա համար մայրաքաղաք արաւ, սահմաններուն վրայ շատ քաղաքներ ամրացուց, որոնցից մինն էլ էր Կորիքոս ծովեզերայ քաղաքը։

Բերիոյ Սուլթան, Ղայասէտտին Ղաղին. 1212-ին Լեւոնի հետ թշնամացաւ, հաւանական է որ Ռայմոնդ Դ-ի թելադրութեամբ։ Սա խաղաղութեան մէջ և առանց մի պատճառի սկսաւ ասպատակել Հայաստանը. երբ սահմաններին վրայ հասաւ Ղայասէտտին դեսպան ուղարկեց Լեւոնին, որ կամ գայ պատերազմի իրա հետ, կամ թէ ոչ՝ իրան հպատակի։ Լեւոն յառաջուց այս բանս իմանալով հրամայեց իրա մարդկանց, որ մի քանի օր եկող դեսպաններուն դէս ու դէն ման ածելով ժամանակ կորցնեն։ Իսկ ինքը Լեւոն, իր ընտիր բանակին գլուխն անցկացած

1 Պատմութիւն քրիստոնէութեան, Ֆլէօրի Աբբայի, հատ. Դ. երես 370։

ճանապարհ ընկաւ և մի արագ ընթացքով գնաց յարձակելու Թշնամւոյն վրայ, որ իրա համար հանգիստ մնում էր դեսպաններուն դարձին: Թշնամին շուարելով այս յանկարծահաս յարձակումից, չկարող եղաւ դէմ դնել ու փախաւ, թողելով իր ամրոցքը բանակը յաղթողի ձեռին: Բայց Լևոն սոյն այս յաջողութիւնը չունեցաւ Իկոնիոյ Սուլթան Ազզէտտին Գայդաուսին հետ ունեցած պատերազմումը, որ մի և նոյն տարին եղաւ: Սուլթանը եկել և Կարան բերդը պաշարել էր. Լևոն անկողին ընկելով և անձամբ կարող չըլելով իր բանակը կառավարել, Կոստանդինին էր յանձնել հրամանատարութիւնը, որ իրա սպարապետն էր և Ատանին որ էր պայլ կամ խնամապետ, և հրաման էլ էր տուել, որ պաշտպանողական գիրք առնեն և ոչ յարձակողական: Ազզէտտին կարող չըլելով բերդին տիրել և վախենալով էլ որ չկարողանայ յետ քաշուիլ պաշարումը վերցրուց և գէպի յետ դառնալ ձեւացրուց: Այս խորամանկ շարժումով Ազզէտտին Հայոց բանակը բաց պաշտում քաշեց և կատաղութեամբ վրայ հասնելով մեծ կոտորած արաւ: Դժբաղդութիւնն իր լրման հասնելու համար, այս գործողութեան ժամանակ մի ասատիկ վէճ բացուեցաւ երկու Հայ հրամանատարներու մէջ. Ատան իր գօրքերովը քաշուեցաւ. առանց մասնակից լինելու ճակատամարտին, Կոստանդին և միւս իշխանները գերի բռնուեցան և Իկոնիա տարուեցան: Լրսելով Լևոն այս չար պատահմունքը, թէ և կատարելապէս չէր առողջացել զէնք ձեռին առաւ, թողուց Թշնամին կապան բերդին առջևը, որ եկել էր և նորունց պաշարելու վրայ էր, գնաց արշաւեց նրա երկիրները: Շատ գիւղեր և քաղաքներ աւարի առնուեցան և այրուեցան և հազարաւոր բնակիչներ կամ կոտորուեցան կամ գերի տարուեցան: Ազզէտտին Գայդաուզ իր յաղթութեանց հանդէսն էր կատարելիս, երբ լսեց այս անցքերը, շտապեց գնաց պաշտպանելու իր երկիրը: Բայց երկու թագաւորներն առանց նորունց պատերազմ բանալու խաղաղութիւն արին և իրանց գերիները իրարու յետ տուին: Երևումէ, որ այս խաղաղութիւնն անելուց յետոյ է, որ Լևոն Բ. «Թագաւոր ամենայն Հայոց» տիտղոսն առաւ, այս տիտղոս իր դրամներուն վրայ պահուեցաւ, թէև անօրինակ յանդգնութեան

նութիւն է, վասն զի Լեւոն միայն փոքր Հայաստանին թագաւորն էր։ Լեւոն 1219-ին վախճանեցաւ 34 տարի թագաւորելուց յետոյ, բոլոր աղգն իրա վրայ ցաւեցաւ։ Լեւոն այն հաղուագիւտ թագաւորներից մինն էր, որոնց մէջ քրիստոնէական և զինուորական առաքինութիւնները, բարեկարգութեանց հոգին և գիտութեանց սէրը և իրանց ազգին երջանկութեան ցանկութիւնը միատեղ կգտնուին։ Խստաբարոյ քրիստոնեայ լինելով, խստամբերութեան օրինակ տուաւ Հայաստանեայց եկեղեցուցն մեծին անդամ։ Նա իրրև վերանորոգիչ նոր նոր կարգեր ու օրէնքներ հաստատեց և իր հպատակներուն վիճակը ապնուացրուց։ Գիտութեանց բարեխամբելով, դպրոցներ և թանգարաններ հիմնեց։ Մի շատ գիտնական մարդիկ, որոնք աշխարհիս ամէն կողմերից բերել տուաւ, առանց զանազանելու նրանց կրօնն ու ազգը, աշխատեցնում էր իր ազգը լուսաւորելու։ Իր պալատը Ֆրանսիացի, Անգլիացի, Գերմանացի և Իտալացի զօրապետներու իջևանն էր եղել, որոնք իրա վեհանձնութիւնն էր բերում և որոնք ծառայում էին հայկական դրօշակին տակ։ Ինչպէս որ Սմբատ նրանց անուան ցուցակը երկարօրէն մեզ աւանդում է։ Թէ որ Հայաստան Լեւոն Բ-ի նման մէկ կամ երկու թագաւոր ունենար, անշուշտ միջին դարու ամէնից դօրաւոր և ամէնից քաղաքակրթուած միապետութիւնը կլինէր, բայց բաղդն ուրիշ կերպ էր որոշել։ Լեւոն մեռաւ առանց իրա արժանաւոր ժառանգ թողելու և իր մեծ մեծ բարեկարգութիւններն անօգուտ մնացին։ Նրա ժամանակումը Հայաստան իր երկրային ամենամեծ ընդարձակութիւնը ստացել էր։ Թէև կարելի չի ըմբռնում որոշել ճիշդ կերպով Հայաստանի նոյն ժամանակուայ սահմանները։ սակայն կարելի է ասել, ստոյգ հաւանականութեամբ, որ արևելեան կողմէն Եփրատին էր դպչում, հիւսիսային կողմէն Սամանթա գետին և Սքիթոլ լճին, արևմտեան կողմէն Գալիքատաս գետին և միջերկրական ծովուն, որ այն կողմերում կոչւում էր «Հայաստանի ծով» հարաւային կողմէն Սուլթան Սու և Սէոք-Սու գետերին։ Հռոմկլայ, Այնտապ և Խասոս քաղաքները այս կողմի սահմաններուն վրայ էին ընկնում։

Լեւոն մեռնելիս, իրա ժառանգ նշանակեց, Զապէլ կամ

Իզապէլ իր միակ աղջկանը, Կոնստանդինի խնամապետութեան տակ, որ իր սպարապետն էր և Ատան պայլի։ Ռուբէն Ռայմոնդ, Լևոնի մահը լսելով, փորձ փորձեց իրան թագաւոր ճանաչեցնելու, բայց Կոնստանդին Տարսոնի մէջ զարկաւ նրան և բռնեց բանդ դրաւ և ուր տեղ մեռաւ 1221-ին։ Այն ժամանակ Զապէլ թագուհի հռչակուեցաւ, և Միականի Բոհեմունդին Փիլիպպոս որդւոյն հետ ամուսնացաւ, այն պայմանով, որ նա Հայոց կրօնը դաւանի և ըստ սովորութեան Հայոց ապրի և վարուի և ոչինչ կերպով երկրին օրէնքներին չդպչի։

Այս թագուհւոյն ժամանակ, Հայաստանը խաւարիան կիսով չափ կորցրուց, որնոր Ալաէտտին Իկոնիոյ Սուլթանն առաւ, սակայն Սելևկիան պահպանեց, որ իր գլխաւոր տեղն էր, Նոյնպէս և մի քանի ուրիշ նահանգներ։ Չորս տարուց յետոյ խմացուեցաւ, որ Փիլիպպոս արքունի թագն և տերութեան անդամանդները գողացել և վերուցելու իր հօրն է զրկել Անտիոք, ուստի գահից ընկաւ և բանդ դրուեցաւ։ Բոհեմունդ չկամեցաւ գողցուած բաները յետ տալ և իր որդին ամենից ատուելով 1225-ին բանտին մէջ մեռաւ։ Այն ժամանակ Կոնստանդին կամեցաւ, կաթուղիկոսի և ուրիշ իշխաններու հաւանութիւնը ստանալով ամուսնացնել Իզապէլն իր Հեթում որդւոյն հետ։ Բայց Իզապէլ գաղտնի վերկացաւ Սելևկիա գնաց իր մայրենի աղգականացը մօտ։ Կոնստանդինի հրաւերքները Իզապէլին մայրաքաղաք բերելու անօգուտ եղան, այնպէս որ ինքը գնաց և զինու զօրութեամբ հրաւիրեց։ Դա էլ այն ժամանակ վեր կացաւ ու եկաւ մայրաքաղաք[1] և Հեթումին հետ ամուսնացաւ, որ 1226-ին թագաւոր Հայաստանի հռչակուեցաւ։

Հեթում Ա. 44 տարի Հայաստանի թագը դլուխը կրեց 1226-ից մինչև 1270։ Ալաէտտին Լևոն Բ-ի մահից և Փիլիպպոսի անկարողութենից առիթ գտնելով, Հայաստանից Իսաւրիոյ մի մասն, որ իր երկիներուն սահմանակից էր, խլել էր և նրա վրայ մի տեսակ իշխանութիւն էր վարում։ Բայց սրանից, սիրպէլ էր երկրին, որ իրա համար տարուայ մէջ 400

1 Սմբատ ժամանակակից պատմագիրը, ասում է, որ Իզապէլ Հեթումին հետ ամուսնանալուց յետոյ քաշուեցաւ Սելևկիա։

նիզակակիր մարդ մնատակարարէ : Խաչակիր իշխաններն, որոնք այն ժամանակ Եդեսիում, Անտիոքում, Տրիպոլսում հաստատուելէին, ինչպէս և Երուսաղէմի թագաւորը՝ մի մասամբ կործանուելէին և մի մասամբ էլ հարկատու էին դառել Մահմետական տէրութեանց : Բոլոր այս քրիստոնեայ տէրութեանց մէջ, Հայաստանը միայն ոտքի վրայ էր կանգնած և թշնամիներից էլ շրջապատուած :

Յայտնի է, որ Հեթում պարտաւորուել է կախում ունենալ, դէթ մի քանի տարուայ համար, Ալաէտտինից, ինչպէս, որ իր դրամները ցոյց են տալի : Երբ փոքր Հայաստանը Հեթումի ժամանակ խաղաղութիւն և երջանկութիւն էր վայելում մի փոքր, մեծն Հայաստան տակնուվրայ ըլելով թաթարներից, արիւն էր թափում : Հայաստանի շատ բնակիչներ այս ժամանակներում այս նոր ասպատակների երկաթից և բռնութենից փախչելով եկան Կիլիկիում հաստատուեցան և Հեթում մարդասիրութեամբ նրանց ընդունեց : Թաթարները բոլոր վերին Ասիան նուաճելուց յետոյ, եկան Իկոնիոյ Սուլթանին հետ էլ կռուեցան : Սուլթանը իր ընտանիքը դալու ձեռներից ապահովացնելու համար Հայաստան դրկեց, ուր տեղ իրա աստիճանին վայել յարգանքով ընդունուեցաւ : Բաչու թաթարներու մեծը յաղթեց Գայասէտտին Քէյ-Խիւսրէվ Սուլթանին և նրա երկրի կիսից աւելին առաւ Ասորիքում՝ Միջագետում և Կապադովկիում և այսպէս հարեւան դառաւ Հայաստանի թագաւորութեան : Հեթում ուրախ եղաւ Իկոնիոյ Սէլճուկեանց ընկնելուն վրայ : Բաչուին առաջարկեց մի պաշտպանողական և յարձակողական դաշնակցութիւն անելու ընդդէմ Սարակինոսաց : Բաչու ընդունեց այս, բայց այն պայմանով, որ Սուլթանին ընտանիքն իրան կյանձնէ : Հեթում իր երկիրը պատերազմի չարիքներից պահպանելու համար, ստիպուեցաւ Սուլթանին ընտանիքը նրա յանձնելու և դաշնադրութիւնն էլ եղաւ :

Կոնդանդին, Լամպրոնի իշխանը Իկոնիոյ Սուլթանից թելադրուած ապստամբեցաւ Հեթումի դէմ և նրա դաւառները յափշտակեց, ապստամբը զսպելու համար, թագաւորը Տարսոնի բերդը նորոգել տուաւ 1228 թուին, ինչպէս որ

այս քաղաքիս արձանագրութիւնները ցոյց են տալի, որոնք զինարան շինեց։ Արքունի գօրերից նեղն ընկնելով Կոստանդին Իկոնիա փախաւ, ուր տեղ մի փոքր յետոյ հետը մի բանակ և Գայասէտտին Քէյ-Խուսրէվն սրած, որու փոքրը որչափ որ ապստամբին օգնելն էր, այն չափ էլ հեթումից վրէժ առնել էր կամենում. բայց հեթումն գէնքն ու զօրքը այս երկու թշնամիներին էլ յաղթեց, Սուլթանն այս պատերազմին մէջ իր բանակին ընտիր մասին հետ մեռաւ 1237-ին, Կոնստանդին եօթն անգամ զարնուելուց յետոյ, հնազանդեցաւ և ներողութիւն գտաւ։ Հեթում Լևոն Բ-ի քաղաքականութեան համեմատ շարունակ յարաբերութիւններ ունեցաւ Եւրոպիոյ արքունեաց հետ։ Իմանալով Ֆրանսիոյ թագաւոր Լուդովիկոս Թ-ին Կիպրոս կղզին հանելն իր խղճորդոյն մտա[1], շտապեց ու դեսպաններ ղրկեց գալուստը շնորհաւորելու և նրան իր գործակցութիւնն առաջարկեց Սարակինոսներու դէմ անելու պատերազմին։

Թաթարներու տէրութեան օրէցօր մեծանալը հեթումին միտքը ձգեց, որ այս ազգին հետ մի մշանջենաւոր դաշնակցութիւն անէ։ Նախ իր Սմբատ եղբայրը յուղարկեց մեծ խանին մօտ իր յարգանքը մատուցանելու նրան շատ մեծ ընծաներ ղրկելով։ Ասում են, որ այս դեսպանութիւնը հետևանք ունեցաւ այս թագաւորին քրիստոնեայ դառնալը։ Մանգոյ խանին Թաթարստանի գահը բարձրանալը հեթումին առիթ եղաւ անձամբ գնալու նրան իր յարգանքը մատուցանելու և նրա եղբօր հետ եղած դաշնադրութիւնը նորոգելու։ Մանգոյ խանը շատ պատուով ընդունեց հեթումին և մի մշանջենական դաշնակցութիւն տրաւ Հայաստանին հետ։ Մեծ խանը խօսք էր տալի պաշտպանելու Հայաստանն ու իրան հին սահմաններուն վրայ հաստատելու, յետ դարձնել տալով Սելճուքեանց յափշտակած երկիրները։ Հեթումն էլ իր կողմանէ խօսք էր տալի մի բանակ զօրք մատակարարելու Եբուսաղէմը Սարակինոսների ձեռից խլելու համար և Թաթարներու թշնամեաց դէմ էլ պատերազմելու։ Ապրէտտին, ի-

1 Հենրիկոս Կիպրոսի թագաւորը հեթումի եղբայր Սմբատին աղջկան հետ ամուսնացել էր։

կոնիոյ Սուլթանը, որուն այս դաշնակցութիւնն ահ և կասկած էր տալի։ Հեթումին բացակայութիւնը յարմար ժամանակ համարելով, նրա երկիրները մտաւ և մի քանի տեղանք առաւ։ Հեթում երեք և կէս տարի գուրս մնալուց յետոյ իր երկիրները դարձաւ և սկսաւ պատրաստութիւն տեսնել Աղչէտանից վրէժ առնելու համար։ Մի բաժին թաթար զօրք իրա քամակուն նստելով, Հեթում իր թշնամոյն երկիրը մտաւ, Սուլթանի բանակը ցրուեցաւ և մի քանի քաղաք, որք են Էրմենէկ կամ Գերմանիկոպոլիս Կալիկատնոս գետին վրայ, Բէհէստանի և բոլոր Խաւարիան նորուանց Հեթումին ձեռն ընկան։ Բէթէնէցիք, որոնք այնքան զօրաւոր էին նուաճուեցան։ Հեթում նմանապէս Մուռնատաս և Մարաշ քաղաքներն էլ առաւ։ Երկու տարի յետոյ Հուլաւուն, որ Ասորւոց երկրումն եղած թաթար զօրքերու հրամանատարն էր Հեթումին իր մօտը կանչեց, նա էլ վերկացաւ գնաց Եգիպտիա 40,000 հեռաւակ և 12,000 ձիաւոր զօրք հետն առած Երուսաղէմն առնելու։ Կզնմես Ե. այն ժամանակ նրան մի յորդորական նամակ գրեց այս ձեռնարկութիւնը դյուլս տանելու։ Հուլաւուն և Հեթումը նախ Մէլէք-Նաղար. Բերիոյ Սուլթանին դէմ գնացին։ Այս քաղաքը յարձակմամբ առնուեցաւ և Սուլթանը, մի կատարեալ պարտութիւն կրելուց յետոյ գերի ընկաւ և ընտանիքովը Պարսկաստան զրկուեցաւ։ Իր երկիրը երկու յաղթողներու մէջ բաժանուեցաւ։ Անտիոք քաղաքը պաշարումից նեղացած ըլլով՝ Հեթումից օգնութիւն խնդրեց, թշնամին յետ մղուեցաւ և քրիստոնէից ապահովութիւնը հաստատուեցաւ։ Երբ Հուլաւուն և Հեթում պատրաստուում էին գնալու և սուրբ քաղաքի քրիստոնեայներն էլ ազատելու 1259-ին, բանակը լուր հասաւ թէ Մանգոյ խանը մեռել է, և թէ Հուլաւուն պէտք է, որ թաթարստան դառնայ իր բոլոր զօրքովը։ Հուլաւուն գնալիս Ասորիքի պատերազմին համար մնայն 20,000 զօրք թողուց իր Աբաղա որդւոյն հրամանատարութեան տակ։

Փնգուխտար Եգիպտացւոյ (Մամլուք) Սուլթանը, Հուլաւունին այսպէս շտապով քաշուելուց քաջալերուելով. Ասորւոց երկիրը մտաւ. Աբաղային յաղթեց և շատ քաղաքներու էլ տիրեց. նրմանապէս և 1268-ին արևմտեան քրիստոնեայների ձեռից Ան-

տիրոջն էլ առաւ։ Սմբատ Եգիպտացի զօրապետը Հեթումի բացակայութենից շահուելով, որ իր զօրքերովը Թաթարստան էր գնացել այն տեղի խռովութիւնները զսպելու, Հայաստանին վրայ ընկաւ. Լեւոն և Թորոս Հեթումի որդիքը շտապով զօրք ժողովեցին իրանց հայրենիքը պաշտպանելու, բայց կռվին խառնուած ժամանակը Թորոս շատ նետերու հարուածքից վիրաւորուած փառաւորապէս պատերազմի դաշտին վրայ ընկաւ և Լեւոնն էլ գերի բռնուեցաւ։ Սիս, Հայաստանի մայրաքաղաքը Եգիպտացիք առին և կրակի տուին։ Եկեղեցիները, պալատները, և հրապարակական շէնքերը և մինչև անգամ թաղաւորներու գերեզմանները պղծուեցան և կործանուեցան և բոլոր դաշտային և ծովեզերեայ քաղաքները մինչև Կորիկոս և ամուր քաղաքներից զատ, ամենքն էլ աւարի առնուեցան։ Եգիպտացիք այս սոսկալի պատերազմից յետոյ անբաւ աւար առած և հաղարաւոր գերի տարած, որոնց մէջն էր և Լեւոն թագաւորի անդրանիկ որդին, քաշուեցան գնացին։ Հեթում վերջապէս իմանալով այս թշուառութիւնները իր երկիրներին օգնելու դիմեց, բայց ինչ օգուտ որ շատ ուշ էր։ Թշնամին արդէն հեռացել էր։ Հեթում այս փորձանքին համբերեց և խոնարհաբար հաշտութիւն արաւ Սուլթանին հետ որ յետ դարձուց Լեւոնը միւս գերիներու հետ միասին և նրանց փոխարէն ստացաւ Սանկոլասար իր բարեկամը և Բերիա քաղաքը. խաղաղութիւնը կամ թէ զինադարարութիւն այսպէս հաստատուեցաւ Հայաստանի և Եգիպտոսի միջ։

Մի տարի յետոյ, Հեթում հասակն առած լինելով և այս աշխարհից էլ ղղուած, Լեւոնին յանձնեց իր թագաւորութեան բեռը ու ինքը գնաց մի վանք քաշուեցաւ կրօնաւոր եղաւ Մակար անունով։ Իր մահն այնքան խորին տրտմութիւն պատճառեց Լեւոնին, որ շատ վտանգաւոր կերպով հիւանդացաւ. Հայաստանի դաւառներից պատգամաւորներ, Ասորոց երկրի թաթար զօրքերու սպարապետից և Եգիպտոսի Սուլթանից եկան այցելութիւն արին վերափառ հիւանդին։ Լեւոն երեք ամսուց յետոյ առողջանալով կառավարութեան սանձը ձեռին առաւ և 1271 թուին թագաւոր օծուեցաւ Տարսոնումը Լեւոն Գ. անունով։ Իրա թագաւորութիւնը 19 տարի տևեց։ Ամենա-

գեղեցիկ առաքինութիւններ ուսման սէր, ողորմածութիւն պարեպաշտութիւն և իր հպատակներու բարեկեցութեան համար ունեցած խնամքն ու հոգսը նրա միջումը փայլում էին։ Շատ հիւանդանոցներ և ուսումնարաններ շինեց իր ազգը լուսաւորելու համար, հաղարաւոր քաջ ձեռք ունեցողներ վարձուեցան տէրութեան ծախքով հազուագիւտ ձեռագիրները օրինակելու, ինչպէս պատմական, մաթէմաթիքական, իմաստասիրական, աստղաբաշխական և վարդապետական։ Լևոն գլխաւորապէս սուրբ Գիրքը օրինակել տուաւ հասարակաց կրթութիւնը հեշտացնելու համար։ Այս ժամանակից է սկսում Հայոց անհամար ձեռագիրները, որոնք այսօր Էջմիածնի, Վենետկու սուրբ Ղազարու, Փարիզու և Լոնդոնի և այլ գրքատները զարդարումեն, որոնց մեծ մասը նրա թագաւորութեան թուականն են կրում իրանց վրայ։

Լևոն իր գահը բարձրանալու օրը՝ տէրութեան դէմ յանցաւոր եղողներուն ընդհանուր թողութիւն տալով՝ նշանաւոր արաւ։ Հետևեալ տարին իրա դէմ պատրաստուած մի դաւակցութիւն գտաւ, որուն անողներն էին իր ազգականներն ու մի քանի պարոններ։ Այս դաւաճանութեան գլխաւորները բռնուեցան, դատապարտուեցան, և ներուեցան. բայց իրանց ղեկները, որոնց մէջ հաւաքուել էին, յարքունիս գրավեցան։

Փնդուխտար, Եգիպտոսի Սուլթանը այս դաւաճանութեան տեղեակ ըլելով, Թուրքմէններու խմբերով իր բանակը ղրկեց, խաղաղութիւնը աւրեց և նորունց մի արշաւանք անել սկսաւ Հայաստանի վրայ։ Լևոն իր պարոններից երեսի վրայ թողած և անկարող յարձակողին դէմ դնելու, Տորոս լեռներու մէջ քաշուեցաւ։ Թշնամին երկիրն առանց պաշտպանողի գտնելով, համարձակ ներս մտաւ, շատ քաղաքներ և գիւղեր, որոնք զուրկ էին բերդերից և ամրոցներից առնուեցան և կործանուեցան։ Սիս քաջութեամբ պաշտպանեց իրան և յետ մղեց Մամլուքներին, բայց Տարսոնը, որ այն ժամանակ Հայաստանի մայրաքաղաքն էր, լիքն բնակիչներով և հոյակապ շէնքերով առնուեցաւ և աւարի տուուեցաւ, 20,000 քրիստոնեայից աւելի յարձակողին երկաթին տակ ընկան և 10,000 էլ գերի տարուեցան։ Թշնամին քաշուելուց յետոյ, Լևոն լեռ-

ներից իջաւ 1275-ին և տրտում տխուր ազգին մէջ երեւեցաւ, իր գանձերը բաց արաւ և առատ առատ ողորմութիւն բաշխեց, քաղաքներն ու գիւղերը և բոլոր կործանուած տեղերը նորոգելու շինել տուաւ։

Նորունց բաղդի հարուածներն եկան առաքինի թագաւորին գլխին խփեցին, նախ իր մի տղան յետոյ մի աղջիկը մահն յափշտակեց տարաւ. ժանտախտն էլ վրայ հասաւ և հասարակաց ցաւն աւելացրուց և սոքն էլ որ միշտ եռեւից կգայ. ամէն տեղ սոսկալի աւեր և կոտորած սփռեց։ Լեւոն այսչափ ձախորդութեանց տակ ընկնելով, անսասան մնաց և համբերեց խոնարհաբար նախախնամութեան կամքը տանելու։

Մամլուքը, (Եգիպտացւոց Սուլթանը) իր առաջին արշաւանքի յաջողութենից քաջալերուելով մի երկրորդ անգամ էլ անելու փորձ փորձեց 1277-ին։ Բայց այս անգամ յաղթուեցաւ և իր յանդգնութիւնը իր կեանքով վճարեց. հաղիւ հազ Եգիպտական բանակը Հայաստանի սահմանից անց էր կացել, որ Լեւոն իր ծերունի սպարապետ Սմբատին հետ միասին նրա ճանապարհը ամէն կողմէն կտրեց։ Եգիպտացիք սարերու կիրճերումը բռնուած, Ադէքսանդրիոյ խորշի մօտերը չարաչար կոտորուեցան։ Սուլթանը վազեց նկաւ իր բանակին օգնութիւն հասնելու, տեսաւ որ ցիրուցան են եղել, հաւաքեց և պատերազմելու յառաջ քշեց, բայց ինքն էլ ծանր կերպով վիրաւորուելով Դամասկոս գնաց, ուր տեղ և շուտով էլ մեռաւ, իր բանակը ցիր ու ցան եղաւ և փախաւ։ Արաղա Հուլաւուի որդին, որ Աստուծոյ երկիրն էր կառավարում մարդ ղրկեց Լեւոնին իր յաղթանակը շնորհաւորելու և մի և նոյն ժամանակ Մեծագետաքի և նրա չորս կողմն եղած երկիրներուն իշխանութիւնն էլ նրան յանձնեց, բայց Լեւոն մերժեց, այն դժուարութեանց համար, որ կարող էր ունենալ մի այնպիսի ընդարձակ երկիր կառավարելումը, այնչափ թշնամեաց մէջ։

Լեւոն, Մամլուքներին յաղթելուց յետոյ, իր զէնքը ընդդէմ Իկոնիոյ Սուլթանին դարձուց, որ Եգիպտացւոց յարձակման ժամանակ եկել և Հայաստանի հիւսիսային մի քանի գաւառները գրաւել էր։ Լեւոն նրա վրայ մի փառաւոր յաղթութիւն տարաւ և ստիպեցրուց նրան 1278-ին իր երկիր-

ներուն շատ նպաստաւոր մի խաղաղութիւն ստորագրել։ Այս կրկնակի յաղթութիւնը Հայաստանի համար մի կատարեալ հանգարտութիւն տուաւ և իր սահմանները ապահովացրեց, բայց երկար ժամանակ կարող չեղաւ վայելել։ 1282-ին Թաթարներու և Եգիպտացւոց մէջ ծագած կռիւը նորէն Լեւոնին ղէնքի հրաւիրեց։ Ալաղա-խանն ոտքի վրայ գրաւ 30,000 զօրք Մանդոյ-Թիմուրի հրամանատարութեան ներքեւ, որ իր եղբայրն էր, Լեւոն գնաց նրա հետ միանալու, իր բանակն էլ միասին գնացին մինչև Համսի կողմերը հասան առանց մի արդելքի պատահելու, Մամլուքները Համս քաղաքը պաշարել էին, դաշտին մէջ այս քաղաքին դիմացը գտնուում էր Սայֆէտտին-ալ-Ալֆի Եգիպտոսի Սուլթանը իրա ամբողջ բանակովը, որ կարողով ճակատ էր կազմել։ Մանդոյ-Թիմուր իր բանակը հետևեալ կերպով պատրաստեց։ Իրա համար բանակին մէջ տեղի հրամանատարութիւնն արաւ, Հայաստանի թագաւորը աջ թեւին հրամանատարութիւնը, և Ալմախ զօրապետն էլ ձախ թեւին։ Երբ պատերազմի նշանը տուին, Ալմախ և Լեւոն թեշնամոյն երկու թեւերը խորտակեցին, վեր խփեցին ու փախցրին։ և նրա քամակից ընկան։ ասում է Յովհաննէս Հերոլտոս, մի քանի մղոն։ Մանդոյ-Թիմուր, նոյն պատմագրին պատմածն նայելով, թէ Սուլթանի ոսկովը հրապուրուած ըլլալով և թէ ահից սարսափած, նախ շատ անարիութեամբ պատերազմեցաւ և յետոյ բոլորովին քաշուեցաւ։ Ալֆի, որ արդէն յուսակտուր էր եղել և կարծում էր թէ պատերազմ կորցրուց, հոգի առաւ և յետ դարձաւ։ Մանդոյ-Թիմուր Եփրատից անց կացաւ։ Լեւոն և Ալմախ երբ թշնամին վանելուցը յետ դարձան տեսան, որ պատերազմ դաշտն երեսի վրայ է թողել իրանց սպառազինը և գնացել է, ուստի իրանք էլ յետ քաշուեցան։ Համս քաղաքը, որ մինչև այն ժամանակ իր Հայ իշխանի քաջութեամբը պաշտպանուում էր, անձնատուր եղաւ։ Լեւոն ուրիշ մի քանի տեղեր էլ կորցրուց, և եղած տեղումը նեղութիւն կրելուն համար Հայաստան մտաւ, բաւականին զգալի կորուստներ անելուց յետոյ։ Այս հարուածից յետոյ, Լեւոն էլի հանգարտութեամբ եօթը տարի թագաւորեց և 1289-ին մեռաւ, որու վրայ իր հպատակները շատ ցաւեցան։

Լևոն Գ-ի ժամանակ, և արդէն իր նախորդներու ժամանակն էլ, Հայոց վաճառականութիւնը մի նշանաւոր զարգացումէր արած, մանաւանդ Հնդկաց և Եւրոպացւոց հետ։ Եգիպտոսը, խաչակիրներու սկսելուց հետէ, արևմտեան քրիստոնեայներու համար փակուած էր, նրա համար Գենովացիք և Վենետիկցիք իրանց վաճառականական անները Հայաստանումն էին հաստատել միջերկրական ծովու ափանց վրայ, և Այաս կամ Այացցо Աղէքսանդրէտպայի խորշումը, Իսոսի կշտին, միջին դարու ամենամեծ վաճառաշահ քաղաքներից մինն եղաւ։ Այս քաղաքն իր համբաւն երկու դարու չափ պահեց, 1150 ից մինչև 1350։ Սանուդо, Բէկոլէթթի և Մարքոբոլոն նմանապէս այս քաղաքի մասին խօսումեն։ Հայ վաճառականները Հնդկաստանից ապրանքներ էին բերել տալի Պասրա, որ Տիդրիս գետին բերանումն է և այն տեղաց այս գետին վրայով մինչև Բաղդատ էին գնում և այս քաղաքից Այաս էին ղրկում, բայց թանկագին ապրանքները, Պարսկաստանից, Հայաստանից անցկացնելով այս տեղ էին հասացնում։ Այս վերջին ճանահարհն աւելի հեռաւոր է երևում սակայն աւելի, ապահովն է։ Այն անհամար վաճառականական դաշնադրութենից որ Հայաստան արել էր Արագոնի, Սիկիլիոյ թագաւորներուն Վենետիկու և Գենովայի հասարակապետութեանց հետ, պատմութեան մէջ միմիայն մէկ հատ է պահպանուել, որնոր Գենովացւոց անչափ արտոնութիւններ է տալի։ Լևոն այս հրովարտակումը «թագաւոր ամենայն Հայոց» տիտղոսն է կրում որնոր իր նախորդներից մի քանիսն էլ կրել էին։

Հէթում Բ. Լևոնի անդրանիկ որդին, իրա տեղն անցկացաւ։ Այս տարօրինակ մարդը, որուն բնութիւնը զրկել էր առողջ մտքից և հաստատուն կամքից, 16 տարուայ միջոցումը երեք անգամ դահից վար իջաւ կրօնաւորի խարազն հագնելու համար և երեք անգամ էլ թողուց խարազն թագաւորական ծիրանիով ծածկուելու համար։ Սրա համար է անշուշտ, որ իր թագաւորութիւնը ուրիշ բաներ մեր յառաջ չբերուս հանում, բայց միայն հետզհետէ եղած բանսարկութեանց սպանութեանց և քաղաքական և կրօնական խռովութեանց մի տեսարան, որոնց մէջ և ինքն իր կեանքը կորցրուց։ Մա-

լէք-ալ-Աշրէֆ-Սալահէտտին Եգիպտոսի Սուլթանը, տրդէն Պաղեստինու Ասորւոյ երկրին և Անտիոքին տէր եղած, էլ ուրիշ բան չէր մտածում, այլ միայն Հայաստանին էլ տիրապետել, որնոր միակ քրիստոնեայ տէրութիւնն էր այս աշխարհներում ապրող: Հեթում իրան սպառնացող վտանգը տեսնելով, մի և նոյն ժամանակ Նիկողայոս Դ. Հռոմայեցւոյ քահանայապետին և Թաթարաց խանին դիմեց օգնութիւն խնդրելու: Իսկ իր ունեցած զօրքերը վտանգաւոր տեղերում ղրկեց: Սուլթանը 1292-ին Հռոմկլայն պաշարեց, ուր տեղ էր կաթուղիկոսի բնակարանը, Հռոմկլայ երկար դիմանալուց յետոյ թշնամւոյն ձեռքն ընկաւ: Բնակիչներուն մեծ մասը անգութ Մամլուքի երկաթովը սպանուեցաւ, մնացածը Յոհաննես կաթուղիկոսին հետ Եգիպտոս գերի տարուեցաւ: Նիկողայոս (պապը) անկարող ըլլալով Հայոց օգնութիւն հասնելու, նրանց դեսպանները Ֆրանսիա յուղարկեց Փիլիպպոս Գեղեցիկի ձեռնտուութիւնը խնդրելու, բայց դեսպաններն ունայն խոստմունքներով յետ դարձան: Հեթումայն ժամանակ հարկադրուեցաւ Սուլթանին հետ մի ամօթալի խաղաղութիւն կամ զինադադարում անել, նրան մի քանի դաւառներով շատ ամուր տեղեր տալով: Մի փոքր յետոյ թագաւորը կառավարութիւնը իր եղբօրը Թորոսին յանձնեց և ինքը գնաց մի վանքի մէջ քաշուեցաւ, երկու տարուց յետոյ Թորոսն էլ նոյնպէս արաւ, Հեթումն էլ էլի աշխարհիս երեսին երևեցաւ դահը բաղմելու համար: Յետոյ վերկացաւ գնաց Թաթարներու մայրաքաղաքը և նրանց խաղան խանին հետ նորունց դաշնակցութիւնը նորոգեց: Հայաստան դառնալիս իր քոյրը Մարիամը կնութեան տուաւ Յունաց կայսր Անդրոնիկոս Բ-ի որդւոյն Միքայէլին և իր միւս քոյրը Խաբէլը, Կիպրոսի թագաւորի եղբօրը. 1296-ին նորունց հրաժարեցաւ թագաւորութենից և իր դահը տուաւ իր երրորդ եղբօրը Սմբատին ու ինքը Թորոսի հետ միասին Կոստանդնուպոլիս գնաց իր քրոջն այցելութիւն: Իր ճանապարհորդութեան դարձին Հայաստանից դուրս հանեցին իրան ուստի և նա նախ Կոստանդնուպոլիս և յետոյ խաղան խանին մօտ դարձաւ օգնութիւն խնդրելու: Բայց Թորոսի հետ բռնուելով Սմբատին ձեռքն ընկաւ, որուն աչքերը հանել

տուաւ և Թորոսին էլ սպաննեց։ Կոսդանդին, Հեթումի չորրորդ եղբայրը ականատես ըլլալով այս անդութ գործքին, բանակը Սմբատին դէմ ապստամբեցուց և բռնադատեց նրան գահից իջնելու, որու վրայ ինքը նստաւ։ Յետոյ Հեթումին էլ ազատեց։ Հեթումը, «Վարք սրբոց» պատմութեան ասածին նայելով, հրաշքով աչքի լոյսը գտնելով երրորդ անգամ գահը նստաւ և իր եղբայրները, Սմբատին ու Կոսդանդինին բռնելով տուաւ և Կոսդանդնուպոլիս ղրկել տուաւ խնդրելով կայսերից, որ նրանց այն տեղ պահէ։ Այս ժամանակից, Հեթում բացարձակ տէր լինելով Հայաստանին իր աւերակ երկիրները նորոգելու հետամուտ եղաւ, զօրք հաւաքեց և Դամասկոսի Էմիրին դէմ գնաց, որ արդէն իր սահմաններուն էր մօտենում։ Մի լերան կիրճը բռնեց և այն տեղ Էմիրին վրայ յարձակելով նրա շատ մարդիկը սպաննեց և իրան էլ ղերի բռնեց իրաններով և վեր առաւ Խաղան խանին ղրկեց։ Խաղան խանն էլ երկու անգամ փորձ փորձեց Հեթումի գործակցութեամբը Աղուոց և Պաղեստինու երկիրները Մամլէքնաղարի լուծից ազատել, բայց ամէն անգամուն էլ սատիպուեցաւ իր դիտաւորութենից ետ կենալ և գնալ իր յատուկ երկիրը պաշտպանել իր ազգականներից մեկին դէմ։ Բայդօն անուն, որ իրա դէմն էր վեր կենում միշտ։ Վերջին անգամ Թաթարստան մեկնելիս, իր խորհուրդը առաջ տանելու հոգսը իր Գոթլուշ սպարապետին յանձնեց։ սա առաջին անգամ մի քանի յաղթութիւններ արաւ թշնամոյն վրայ, բայց յետոյ սատիպուեցաւ Եփրատից դէսը անցկենալ մի շատ մարդիկ կորցնելուց յետոյ։ Դժբաղդութիւնն իր վերջին ծայրը հասնելու համար, Խաղան խանն էլ մեռաւ 1302-ին։ Ղարպաղանդ նրա յաջորդը մահմեդական եղաւ և Հայաստանին էլ թշնամի։ Թաթարաց բանակը իր հին դաշնակիցներու դէմ դարձաւ և երկիրն ճանապարհներն ու դիրքը լաւ ճանաչելով ամբողջ մի տարի տակն ու վրայ արաւ։

Այս դէպքերու ժամանակ, Հեթում կամ համաղմամբ կամ կեղծաւորութեամբ իրա մի քանի պալատականացը հետ Հռովմէական եկեղեցին ընդունեց, և անկարող լինելով իր ազգին բարոյական և նիւթական զօրութիւնը միացնելու և ի

դորձ դնելու իր գահին պաշտպանութեանը համար, կարծեց որ ժամանակը եկել է Հռոմայեցւոց քահանայապետին իր կողմը շահելու, նա, որ իր յատուկ օգուտները պաշտպանելումը Հեթումից աւելի բարեբաղդ չէր: Սարակինոսներն ու Թիւրքմէնները Թաթարների օրինակից սիրտ առած, սկսան իրանք էլ արշաւել և ամբողջ քաղաքներ ու գաւառներ աւերակ դարձնել: Հեթում երկար ժամանակ անզգայութեան մէջ ընկղմած մնալով, վերջապէս ղէնքը ձեռին առաւ և Խոսրի կողմերը նրանց հանդիպելով, նրանց 14,000 մարդով բաղկացած բանակը ցրուեց, որոնցից 6700 հոգին մեռան և գերի բռնուեցան: Այս յաղթանակին համբաւը մի փոքր ժամանակ այս ասպատակներու ամբոխը կանգնեցուց և Հայաստան այնուհետև մի հանգստութիւն վայելելու յոյս ունեցաւ:

Հեթում, 1305 թուին երրորդ անգամ գահից վար իջանելով նրա վրայ բաղմեցուց իր Թորոս եղբօրը որդին Լեւոնը:

Լեւոն Դ. իր հօրեղբօրը շատ իսկոյն դնաց, իր թագաւորը օծուելուց անմիջապէս յետոյ, Կղեմէս Ե-ին դեսպաններ յուղարկեց, որոնք ունայն խոստմունքներով յետ դարձան, ինչպէս յառաջ: Սուրբ Հայրը (այսինքն պապը) տեսնելով Հայաստանի ողորմելի վիճակը, որուն մէջ Հեթում Բ-ի և Լեւոն Դ-ի անկարողութիւնն ու տգիտութիւնը գլորեցին, պահանջում էր, ոչ թէ միայն Հայաստանեայց եկեղեցւոյն պարզ և յայտնի հնազանդութիւնը, այլ նաև բուն թագաւորին իրան հպատակ ճանաչելը սուրբ գահին:

Հայաստանեայց եկեղեցին իր սկզբից անկախ էր եղել և ամենևին մի հաղորդակցութիւն չէր ունեցել Հռոմայական եկեղեցւոյն հետ: Բայց Հայաստանի արքունական խաչակիրներից հետէ Կիպրոսի, Անտիոքի, Եդեսիոյ, Սիկիլիայ և Մաճառքստանի վրայ տիրող ցեղերուն հետ խնամութիւններ անելը, նոյնպէս և ղինուորական դաղթականների հաստատուելը, ինչպէս Տաճարականաց և Ասպնջականաց, Հայոց ազգին և Հռոմէական եկեղեցւոյն մէջ մերձաւորութիւններ էր յառաջ բերել: Չորեքտասաներորդ դարումը գտնուեցան մի քանի աշխարհական կամ եկեղեցական Հայեր, որոնք երկու եկեղեցիները միացընելու համար ունեցած փափաքին յայտնեցին, մանաւանդ

այն ժամանակ, երբ հայկական թագաւորութիւնը՝ մահմեդական տէրութիւններից պաշարուած շատ տկարացել էր և չէր կարող էլ իր յատուկ զօրութեամբն իրան պաշտպանել։

Հռոմկլայի եկեղեցի, երրորդ ժողովքը, 1178 ին և 1179-ին, հետևանք էր ունեցել Հայոց և Յունաց եկեղեցեաց մէջ, եթէ ոչ իսկութեամբ դէթ անունով մի միութիւն։ Սսոյ հինգերորդ ժողովքը 1307-ին, վեցերորդը 1309-ին, եօթներորդը 1342 ին, ութներորդը 1361-ին, նմանապէս Ատանայի ժողովքն էլ 1316-ին աշխատեցան Հռոմէական և Հայաստանեայց եկեղեցւոյն միաւորութիւնը գլուխ տանել։ Բայց Հռոմայ քահանայապետը, ինչպէս որ ասած է մի երևելի հեղինակ[1], «աւելի երկրին հետ էր զբաղած, քան թէ երկնի և եկեղեցին թողել էր պատերազմի դաշտին մէջ բնակելու համար» ոչ վէճ, ոչ խնդիր և ոչ քննութիւն էր մտիկ անում, այլ պահանջում էր, որ Հայոց եկեղեցին յայտնի և պարզ հնազանդութիւն տնի և բոլորովին վերանորոգուի քաթոլիքական եկեղեցիից օրինակուելով։

Որչափ արտաքին վտանգները սպառնում էին Հայոց թագաւորութիւնը կործանելու, այնչափ էլ սուրբ հայրը (պապը) իր պահանջմունքներն աւելացնում էր։ Այս փառասիրութիւնն եղաւ գլխաւոր պատճառ, որ ամէն խաղաղութեան և հաշտութեան փորձերը ոչինչ հետևանք չունեցան։

Լևոն Դ. և Հեթում առաջին զոհերն եղան իրանց յիմար հաւատուրացութեան։ Միութեան կուսակիցները 1307-ին սկզբումը մի ժողով արին ու որոշեցին Հայոց ծէսերը փոփոխել։ Սրա համար մի անբաւականութիւն ծագեցաւ և յետոյ մի ապստամբութիւն, որով բոլոր ազգը ոտքի վրայ կանգնեցաւ։ Պիլարկու Խանը, որ այն ժամանակներումը Հայաստանումն էր գտնուում, այս անկարգութեանց վերջ տալու համար, սպանել տուաւ, մի ոչինչ պատճառի համար երկու թագաւորներն ու խնամապետն էլ իրաններու հետ միասին։

Օշին իր եղբօրը Լևոնին մահն իմանալով, 1308-ին կառավարութեան սանձը ձեռին առաւ և Պիլարկուն դուրս քըշեց, որ մի քանի ժամանակից յետոյ սպանուեցաւ։ Օշին ջա-

1 Կոմս-Սէկիւր, Արևելեան կայսրութեան պատմութիւն, երես 502։

նադրութեամբ սկսաւ կրօնական խնդիրներով վրդոված տէրութեանը մէջ կարգ և կանոն հաստատելու գործել։ Կիպրոսում պատահած խռովութեան մէջ, որոնք տեղի ունեցաւ Հենրիկոս Թագաւորին և նրա եղբօր Ամորիին մէջ, երևումէ, որ Օշին երկրորդին կողմը բռնեց, որ իր քեռայրն էր։ Հենրիկոս, որ այս խռովութեանց ժամանակ Հայաստան էր քաշուել մի տարուց յետոյ Կիպրոս կղզին դարձաւ և գահը նստաւ։ Այն ժամանակ Օշինի և Հենրիկոսի մէջ մի թշնամութիւն սկսաւ, որոնք շատ տարիներ տևեց։ Կղեմէս Ե. և Յովհաննէս ԻԲ. իրանց ազդեցութիւնն ի գործ դրին նրա մէջ մի զինադադարումանել տալու համար։ Ցիտոյ Գենովացւոց միջնորդութեամբ խաղաղութիւնը հաստատուեցաւ։ Օշին մի կողմանէ պատերազմից նեղացած, որոնք ընդդէմ Կիպրոսի բաց էր արել, միւս կողմանէ Մալուքների ահարկու պատրաստութիւններից սարսափած, որոնց միտքն իր տէրութիւնը գրաւել էր, երկու անգամ, մինը 1314-ին և միւսը 1315-ին դեսպաններ ուղարկեց Ֆրանսիա Փիլիպպոս Վալուայի առաջը դնելու արևելեան քրիստոնէից վիճակը և նրա օգնութիւնը խնդրելու։ Բայց Ֆրանսիան Ֆլանդրիոյ հետ պատերազմով զբաղած՝ ամենևին մի օգնութիւն կարող չեղաւ անել։ Օշին անօգնական մնալով միմիայն իր զօրութեամբ ինչպէս որ կարող եղաւ իրան պաշտպանեց ու 1320-ին մեռաւ։

Օշինի իր տէրութեան մէջ շինել տուած անհամար բերդերուն և եկեղեցիներուն մէջ, Տարսոնինը ամէնից երևելին է երևումը ընի։ Այս քաղաքիս պարիսպները, որոնք արքայազն իշխան Կոնստանդին սկսաւ շինել, Օշինի ձեռքով աւարտուեցան 1320-ին իր թագաւորութեան վերջին տարին, ինչպէս որ այս քաղաքիս մի եկեղեցումը պահպանուած արձանագրութիւնը ցոյց է տալի։ Օշին այս տեղ մի եկեղեցի էլ շինել տուաւ, որոնք մահմեդականաց տիրապետութեան ժամանակ մզկիթ դառաւ և որոնք այսօր կոչուումէ «Բիլիսէ Ջամի», որ նշանակումէ եկեղեցի-մզկիթ։

Լևոն Ե. Օշինի որդին, Օշին իշխանի խնամապետութեամբ գահն անցկացաւ դեռ 10 տարեկան։ Իր 21 տարուայ թագաւորութիւնը ուրիշ բան չհանել մեր առաջը, բայց միայն

մոլորութեանց, անկարողութեան, անգթութեան և անքաղաքակիր գործքերու մի խառնիխուռն տեսարան։ Հայաստան, որ արդէն իր նախորդներու ժամանակ բուն Կիլիկիոյ սահմաններում էր ամիսփուել և մինչև իր հիմունքներումն անդամ սարսռել դղրդուել էր։ Լևոն Ե-ի ժամանակ դէպի կործանումն էր դիմում արագ արագ քայլելով։ Մալէք-Նազարի (Եղիազոսի Սուլթանի) տէրութիւնը, այս ժամանակում տարածում էր Նեղոսի եղերքներից մինչև պարսկական ծովը, իր մէջ բովանդակելով Միջագետքը, Ասորոց երկիրը և Պաղեստինը՝ արևելքի բոլոր քրիստոնեայ երկիրները այսպէս նրա լուծի տակն էին գտնուում, բացի Հայաստանից։ Կիպրոս կղզին, որոնք միացը դրաւ, որ նուաճէ։ Աւելի լաւ հանելու համար իր նպատակին, մի դաշնադրութեամբ Թիմուրթաշին և Արամանին հետ կապուեցաւ, որոնց մէկը Թաթարներու մեծն էր և միւսն էլ Թիւրքմէններու։ և Իկոնիում էին իշխում, որոնք Թաթարներն էին նուաճել, Կապադովկիում և Եփրատ գետին մերձակայ գաւառներում։

Այս դաշնակցութեան նպատակն էր Կիլիկիայից քրիստոնէից տիրապետութիւնը ջնջել, որոնց վերջին ապաստարանն էր, և այս կերպով վերացնել այն տեղայ արևմտեան քրիստոնեայներու Երուսաղէմի տիրելու յոյսը։ Այսպէս է մեղ ցոյց տալի Յովհաննէս ԻԹ-ի հրովարտակը։ Ուստի Հայաստան այն զոհն էր, որնոր պէտք է մորթուեր քրիստոնէութեան համար։ Արևմտեան քրիստոնէից Հայաստանը պաշտպանելու համար նորէն պատրաստուած խաչակրութեան համբաւը՝ առիթ տուաւ դաշնակիցներին շտապով իրանց ձեռնարկութիւնը ի գործ դնելու։ Թիմուրթաշ 30,000 ձիաւորով մի յարձակում արաւ Հայաստանին վրայ և 25 օր շարունակ հուր և մահ սփռեց ամէն տեղ։ Փառաւոր քաղաքներ քարուքանդ եղան, տարի առնուեցան և կրակի տուուեցան, դաշտերն ու այգիները աւերեցան և նուիրական տեղերը պղծուեցան և հազարաւոր մատաղ տղաքներ էլ և աղջիկներ էլ գերի տարուեցան։ Մի փոքր յետոյ Արաման մտաւ Հայաստան և ըստ օրինակին Թաթարայ աւերնու քանդումը շարունակեց։ Հաղիւ թէ Արաման աւարով բեռնաւորած Հայաստան թողել գուրս էր

գալի։ Եգիպտացւոց բանակը մտաւ Հայաստան և վերջին հարուածը տուաւ ամէն բան քանդելով և կործանելով։ Եգիպտացւոց Կիլիկիոյն արած աւերը, քանդն ու կոտորածը, այն աստիճան սոսկալի եղաւ, որ Հայաստանի դաշտերն ու բլուրները մի ահրելի անապատ դարձան և կրակի տուած քաղաքներուն մնացեալը իմաց տաւ արևմտեան քրիստոնէից, մահմետականութեան յաղթանակը արևելեան քրիստոնէութեան վրայ։ Եգիպտացիք պաշտպանին Հայաստանը քարուքանդ անելուց յետոյ Եկան և Այասի առաջը բանակը դրին, որ միջին դարու Տիւրոսն էր։ Այստ մինչև վերջին շունչը գիմացաւ, յաղթողն զայրացած իր կորցրած անհամար մարդոցը համար այս քաղաքը պաշարելիս, բոլոր բնակիչքը մեռնելու կամ գերի տանելու դատապարտեց։ Մի մասը Կիպրոս կղզին փախաւ Թագաւորի քրիստոնէից օգնութեան համար զրկած նաւերովը, միւսն էլ գնաց Կորիկոս[1] ապաստանեցաւ։ Հայոց երիտասարդները, տեսնելով իրանց ողորմելի թագաւորին, որ այս վերջին վայրկեաններումն էլ կրօնական խնդիրներու հետ ընդունում և իրանց իշխաններն էլ երկպառակութեանց մէջ ընկած են, գնդեր կազմեցին իրանց բոյնն ու կրօնը պաշտպանելու համար։ Այս գնդերից առաջինն, որ 600 կորիչ պատերազմողներով էր կազմուած, Թշնամւոյն վրայ յարձակեցաւ, որ Այասից աւար և գերի վերցուցած Պիրամոս գետին ափանց վրայ կանգ էր առել և հանգարտութեամբ իր յաղթանակն էր վայելում։ Այս գունդը երեք անգամ յետ մղուելով երեք անգամ էլի նորունց յարձակեցաւ նրանց վրայ և այնպէս մեծ կոտորած ափռեց, որ Թշնամին ոտնակոխ եղաւ և Հայաստանից դուրս վանուեցաւ 5000 մարդ կորցրնելուց յետոյ։ Միւս գունդը 200 մարդով կազմուած, մի կիրճ բռնեց, որ տեղայ 18,000 մարդով Թշնամեաց մի բաժին զօրք գլխի անցկենար։ Այս 200 մարդիկը այնպէս կատաղութեամբ նրանց վրայ թափեցան, որոնցից 6000 հոգի սպանեցին իրանց գերիներն ու կողոպուտն էլ աղատելով։ Եգիպտացիք այսպէս յաղթուելով մի փոքր կակղացան, և նրանք, որ յառաջ Հայաստանի վրայ տիրեցն էին մտածում, նրա հետ 15

1 Քըզլար — Քալէսի։

տարուայ համար մի զինադադարում արին։ Ահաւասիկ որոնք էին այս զինադադարման գլխաւոր պայմանները, Ա. Հայաստանը խոստանում էր Սուլթանին տարեկան 50,000 ֆիորին տուրք վճարել։ Բ. Այասի մաքսի եկամուտն կէսը Սուլթանին թողել, ինչպէս նաև օտարականաց վաճառուած առաջին եկամտին կէսը։ Սուլթանն էլ իր կողմանէ խոսք էր տալի, Ա. Հայաստանում ոչ մի բերդ և ոչ մի տեղ իր զօրքերովը չբռնել։ Բ. իր ծախքովը Այասի պարիսպներն ու նաւահանգիստը շինել։ Նմանապէս իր ուրիշ կործանած քաղաքներն էլ։

Այս զինադադարումն չկատարուած. Լեւոն այս իրարու եւ եկած յարձակմունքներից նեղն ընկած, շատ անգամ իր դեսպաններովը Եւրոպիոյ իշխաններուն էր դիմել՝ նրանցից օգնութիւն խնդրելու համար։ Արդէն Եւրոպիում 25 տարուց հետէ խորհուրդ էին անում մի նոր խաչակրութիւն կազմել Հայաստանին համար։ Հեթում Կորիկոսի իշխանը, Ֆրանսիա էր դրկուել 1307-ին այս բանիս վրայ տեղեկութիւններ տալու համար[1]։ Յովհաննէս Իբ. պապը տեսնելով քրիստոնէութեան վերջին ծայրը հասնելը Հայաստանի մէջ, շատ ցաւեցաւ և Ֆրանսիոյ թագաւորից շտապուած՝ այս բանիս մասին Հայաստանն ազատելու համար խաչակրութիւն կազմել հրատարակեց։ Բոհեմիոյ, Նաւարրայի, Արագոնի թագաւորները մեծ հանդէսով խաչակիր եղան։ Եւրոպիում այս նը-պատակիս համար մեծ պատրաստութիւններ եղաւ։ Փիլիպպոս Վալուային և Յովհաննէս Իբ. յիշատակին յարգանք մատուցանելով, պարտական ենք ասել, որ նրանց Հայաստանի համար առատապէս ցոյց տուած համակրութիւնը առանց գործքի մնաց և մի նոր պատճառ դառաւ այս տխուր երկրին թշուառութեանցը։

Եգիպտացիք զարթնելով նոր խաչակրութեան ձայնից, նորէն զէնք առին իրանց ձեռին. զինադադարումը աւրեցին և Հայաստանի վրայ ընկան։ Լեւոնը, ողբալի Լեւոնը, իր կրքերուն գերի եղած. իր կատաղութեան մէջ իր ամուսինը և իր խնամակալն ուրիշ փորձառու զօրավարներու հետ սպանել

1 Տիեզերական աշխարհագրութիւն, Մալդ—Բրէոնի հատ. Ա. երես

էր։ Այս բանով իր ազգն իրանից հեռացրել էր, այնպէս որ այս յետին բոպէում ոչինչ պաշտպանութիւն չկարող եղաւ պատրաստել։ Թշնամին առանց մի դժուարայաղթ արգելքի պատահելու Հայաստան մտաւ և իր ուզածին չափ տակնուվրայ արաւ և վերկացաւ գնաց աւարով և գերիով։ Լեւոն 1330-ին նորէն Ֆրանսիոյ թագաւորին և Սիկիլիոյ թագաւորին դիմեց, որ իր անէրն էր, Նմանապէս և Բենեդիկտոս ԺԲ-ին, որ փոխանակ նրա ուզած բանակին, մի քանի պարկ ալիւր զրկեց սովը թեթևացնելու համար, որնոր յառաջ էր եկել աւերումից և քանդումից։ Փիլիպպոս-դը-Վալուան 10,000 Ֆիորին ոսկի զրկեց նրան։ Մալէք-էլ-Նազար Մահմուտ Եգիպտոսի Սուլթանը իր արշաւանքները կրկնեց 1335-ին և 1337-ին ստիպեցրուց Լեւոնին խաղաղութիւն խնդրելու, որուն առաջին պայմաններն էր թէ «Հայաստանի թագաւորը խոսք պէտք է տայ սուրբ Աւետարանին և խաչին վրայ երդում ուտելով այնուհետև ոչ մի հսկողդակցութիւն և բարեկամութիւն չունենալ արևմտեան քրիստոնէից հետ», խաղաղութիւնը միանգամ, որ այս կերպով կատարուեցաւ, Եգիպտացին իր բանակովը դուրս եկաւ Հայաստանից 1337-ին։

Լեւոն Ե. 1341-ին[1] մեռաւ առանց ժառանգ թողելու։ Եւ Ռուբենեան տան ուղիղ շաւիղը նրանով բոլորովին վերջացաւ։ Յովհաննէս Լուսինեան իշխանը Խապէլի սերունդը, որ Լեւոն Գ-ի և Լուսինեան Ամորիի աղջիկն էր Ֆրանսիայի ազնուական, նախ Տիրոսի իշխան եղաւ յետոյ Կիպրոսի թագաւոր, Հայաստանի թագաւոր ընտրուեցաւ։ Կոնստանդին Գ-ի անուն կրեց և միայն մի տարի թագաւորեց վասն զի 1342-ին իր զինուորների ձեռքով սպանուեցաւ, իր անկանոն վարուցը համար։ Այն ժամանակ Գիւ, կամ Գիպոն, նրա եղբօրը դահը հրաւիրեցին Հայաստանի մեծամեծները։

Բենեդիկտոս ԺԲ. չեմ իմանում ինչ իրաւամբ, անշուշտ միջին դարու մթին ժամանակներից հանած, Լեւոն Ե-ին Սուլթանի արաձ երդումից արձակել էր։ Եւ կրօնի անունով նրան և նրա յաջորդներուն հետ դաշնի մի հպատակութիւններ էր նիւթել

1 Սմբատ իր տարեգրութիւնը 1341-ին է վերջացնում, Լեւոն Ե-ի մահուան պատմութիւնը չգիտացուել։

որնոր Եգիպտացւոց հպատակութիւն անելուց աւելի նախատական էր։ Եգիպտացիք իմանալով Հայաստանում անցկացածները նորունց իրանց Արաբացի զօրքերովը Հայաստան մտան, որոնք անցկացած աւերն ու կործանումը նորոգեցին, Գիդոն անկարող իր երկիրը պաշտպանելու և իրա աղդին էլ ատելի ընելով, երկու տարուց յետոյ սպանուեցաւ։ Կոնստանդին Դ. Ռուբենի մերձաւոր ազդականը և Բաղդինի որդին, որ Հայաստանի սպարապետն էր, նրա տեղն անցկացաւ 1345-ին և մինչև 1363 թըուական թագաւորեց։

Կոնստանդին, իր խելքի և օրտի պատուական յատկութիւններովն արժանի էր մի լաւ ժամանակ թագաւոր լինելու։ Քրիստոնէական և ընկերական առաքինութիւններն այն ընդհանուր ապականութեան ժամանակներումը, արտաքոյ կարդի բաներ էին երևում։ Կրօնական խառվութիւնները դադարեցնելուց, և եկեղեցւոյն ու իր արքունեաց մէջ եղած բանսարկութեանց վերջ դնելուց յետոյ, Կոնստանդին խոհեմութեամբ սկսաւ ընկերութեան մէջ կարդ և իր տէրութեան մէջ ել ապահովութիւն հաստատել, երկրագործութիւնն ու վաճառականութիւնն էլ հաստատեց և իր մանաւոր ջանքն եղաւ իր աղդին բարոյական վիճակը լաւացնել։

Այն մտածմունքն, թէ որչափ Հայաստան կանդուն կմնայ արևմտեան քրիստոնեայքը Պաղեստին առնելու կմտածեն, վճռել տուաւ Եգիպտոսի Սուլթանին նորունց Հայաստանին տիրելու։ Առանց մի տեղ արդելքի պատահելու, Եգիպտացիք վերկացան և եկան մինչև Այաս, որու վրայ յարձակելով առին։ Կոնստանդին, Կիպրոսի թագաւորից և Հռոտոսի ասպետներու մեծաւոր թէոդատից օգնութիւն առնելուց յետոյ գնաց նրանց հետ պատերազմելու։ Եգիպտացիք յաղթուած պարտաւորուեցան Հայոց երկրից դուրս գնալու։ Այն ժամանակ Կոնստանդինի դեսպանները Ֆրանսիա և Անդղիա գնացին այս յաղթութեան լուրը աւետելու և մի և նոյն ժամանակ օգնութիւն խնդրելու թէ որ նորունց թշնամին Հայաստան մտնելու լինի։ Բայց Ֆրանսիան Գրէսիի ստակալի ճակատամարտից յետոյ իր դլխին դարման անելու համար էր պարտական մտածել։ Անդլիան էլ ուրիշ բան չէր մտածում, բայց

միայն իր յաղթութեամբը քաղաք պատուղներից շահ հանել։ Կոնստանդին, այս տերութիւններից օգնութիւն ունենալուց յոյսը կտրելով, մի զօրեղ պաշտպանութիւն պատրաստելու համար եղաւ իրա առանձին ունեցած զօրութեամբը։ Կիպրոսի նաւատորմիղը, որոնք 4 նաւով և 10 ձկնանաւով էր կազմուած սահմանեցրուց Եգիպտացիքը, որոնք եկել և Գուրկոյ քաղաքը պաշարել էին, յետ քաշուելու, և Կոնստանդին պաշտպանողական դիրքը թողելով յարձակողականն արաւ։ Ամենոս սարեցից անցկացաւ 1357-ին և Ալէքսանդրիտա քաղաքը Եգիպտացւոց ձեռից առաւ։ Այս յաղթութիւններն առ ժամանակ Եգիպտացիքը կանգնեցրուց և Հայաստանն էլ մի փոքր հանգստութիւն գտաւ, որ տեւեց մինչև 1362 թիւը, երբ Կոնստանդինն էլ մեռաւ։ Կոնստանդին բնաւ ժառանգ չթողուց և իր մահուանից յետոյ երկու տարի նորէն առանց թագաւորի մնաց Հայաստան, այս անտէրութեան ժամանակը Հայոց ազգին ընկերական կապերը կամաց կամաց քանդուեցան։

Երբ գլխաւոր ազգու իշխանութիւնը վերջացաւ, բերդերու և գղեակներու իշխաններն ու հրամանատարներն իրանք իրանց ինքնիշխան արին, սրանից քաղաքական երկպառակութիւններն ու պատերազմները և կատարեալ անիշխանութիւնը սկսան։ Այս միջոցի պատմութիւնը շատ մութ է, վասն զի ժամանակակից պատմագրներ չկան։ Փարիզու կայսերական թանգարանումը պահպանուած Ռուբենեան թագաւորութեան դրամներու մէջ երկու հատ դրակո կամ դրաշո անունով ստակներ գտնուում, որոնց վրայ Հայաստանի թագաւոր է գրուած, կարծուում է թէ սա Հայաստանի մի մասին կամ բոլորին վրայ թագաւորած լինի Կոնստանդնից յետոյ։ Շատ հաւանական է, որ այն ժամանակ անկախ իշխաններ կային մանաւանդ Հայաստանի հիւսիսային արևմտեան կողմումը, միջերկրական ծովուն եղերքներին վրայ, որ տեղաց մի քանի քաղաք և բերդ Լևոն Ե-ը, Կիպրոսի թագաւոր Պետրոսին և Ադլիայի տասպատ Բոպերդ-ը Դոլոսին տուաւ։ Պարոն Վիկտոր Լանգլուան Հայաստանի միջին դարու դրամագիտութեան գրքին մէջ այս դրամներու ճշմարիտ լինելը մերժում է, որոնք ասում է տասն և ութերորդ դարումն են շինուած։ Վիկտոր Լանգլուա, Հա-

յաստանի համար մի ուրիշ Պետրոս Ա. անունով թագաւոր է տալիս, որ մէկ տարի թագաւորութիւն արել է, 1368-ից մինչև 1369։ Այս կարծիքը, ինչպէս որ երևում է Կուլլիէլմոս-ը Մաշոյի տարեգրութենից առած՝ հիմնուած է այս անձի դրամներուն մինը գտնուելուն, որոնք ինքը տեսել է Ատանայում Պարոն Արդայի դրամներուն մէջ։ Սակայն մեր պատմագրերս, այս երկու թագաւորներու և նրանց գահակալութեանց թուականին վրայ պահած խորհրդութիւնը մեզ կպարտաւորացնէ այս կարծիքները իրրև պատմական իրողութիւն չընդունելու։ Պարոն Վիկտոր Լանգլուան, որ Կոնստանդին Դ-ի թագաւորութիւնը, փոխանակ 1345-ից մինչև 1362 դնելու, 1345-ից մինչև 1363 է դնում, կարծում է, որ Հայաստանի գահը թափուր է մնում 1363-ից մինչև 1368 և այս միջոց ժամանակումն է, որ Պետրոս Ա-ը թագաւորեց ասում է, յետոյ նորից 1369-ից մինչև 1375, մի անաէրնջութեան ժամանակ է բերում, որու միջոցին Լևոն Զ-ը գահն է բարձրացնում։

Յայտնի է, որ թուականի և իրողութեան մի խառնիխուռնութիւն կայ Պետրոս Ա-նոյն և Լևոն Դ-ի թագաւորելու մասին։ Հաւանական է, որ Կիպրոսի Պետրոս թագաւորը Հայաստանի թագաւորի անունը կրած ընի իր վրայ. և թէ ստակ էլ կորել տուած լինի Հայոց գրերով, առանց երբէք Հայաստանը տեսնելու և նրա վրայ տիրելու։ Լևոն Ե արդէն Անդիոքիայ և Սիկիլիան բերդերը տուել էր Հռոդոսի ասպետներուն և Կորիկոսի բերդն էլ Կիպրոսի թագաւորին փոխարէն այն օգնութեան, որ մատուցել էր նրան 1337-ին Եգիպտացիքը դուրս հանելու համար։ Կոնստանդին Դ-ի մեռնելուց երկու տարի յետոյ, Լևոն Զ. Կիպրոսի թագաւոր Պետրոսի ազգականը 1365-ին Հայաստանի թագաւոր ընտրուեցաւ և յաջորդ տարին էլ յաղթուեցաւ։ Այս ժամանակներումն է անշուշտ, որ Պետրոս, որ արդէն Հայաստանի ծովեզերքներին վրայ տիրում էր, այս երկրին թագը ձեռք բերելու համար պահանջմունքներ արաւ։ Ուրիշ կերպ չկարելի ընում մեկնել այս ժամանակների մթին պատմութիւնն առանց սխալուելու։

Դէնը թողելով այս կասկածելի խնդիրներուն քննութիւնը և մի քանի օտարական հեղինակներու ցոյց տուած

թուականներուն և թագաւորներուն մէջ եղած սխալանքներին ուղղութիւնը, իմ պատմութեան թելը սկսեմ։ Հայաստանի մեծամեծները ներքին անկարգութիւններից ձանձրացած և արտաքին վտանգներից էլ սարսափած, միաբանեցան իրանց մէջ և որոշեցին մի թագաւոր ունենալ։ Ընտրութիւնը Լուսինեան Լեւոն Զ-ի վրայ ընկաւ և թագաւոր եղաւ։ Լեւոն քաջ և առաքինի մարդ էր, բայց փող և զօրք չունէր, Հայաստանին գահն ելաւ նրան վերջին օրհասն տեսնելու։ Այն ժամանակուայ Հայաստանն էլ արժանի չէր իր անկախութիւնը վայելելու, արժանի էր որ օտարին լուծը կրէ։ Եգիպտացիք 1366-ին յարձակեցան։ Լեւոն հազիւ կարողացաւ մի քանի մարդ հաւաքել իր դրօշակին տակ, բայց յաղթուելով թշնամիից, որ քսան անգամ աւելի էր թուով խաղաղութիւն խնդրեց։ Հինգ տարուց յետոյ 1371-ին Եգիպտացիք նորէն յարձակեցան Հայաստանին վրայ և Լեւոն կռուին մէջ վիրաւորուելով Տորոս լերան մի կրճուտը քաշուեցաւ։ Կատաղի Եգիպտացին ամէն բան կրակի տուաւ, ամէն տեղ արիւն թափեց։ Քաղաքները, եկեղեցիները, հիւանդանոցները ամէն տեղ կործանեցան։ Մարիամ թագուհին, որ մի ուրիշ ճանապարհով փախել էր, էլ իր ամուսնոյն վրայ ոչինչ տեղեկութիւն չէր առնում և կարծեց որ մեռած է։ Թագուհին այս դժբաղդութիւնը շատակեց իմաց անելու իրա ազգական Տարանտի իշխան Ֆիլիպպոսին, որ միաբանութեամբ Եւրոպական տէրութեանց Լեգրիզոր ԺԱ. պապին, Մոնթերայի Մարիզ Յովհաննէսի ազգական Օթոն-ը Պուենսվիկ անունով մարդին, Հայաստանի թագուհուոյն հետ ամուսնանալու հրաւիրեց։ Բայց Լեւոնի անակնկալ երևոյթն այս խորհուրդը ջնջեց։ Մալէք-էլ-Էշրէֆ-Շաբան Եգիպտացին, տեսնելով Հայաստանին վերջին ծայր հասնելը, մի բանակ ղրկեց 1374-ին, նրան վերջին հարուածը տալու։ Շատ քաղաքներ, որ արդէն հազար անգամ առնուել, էլի առնուել, կործանուել և աւարի էր առնուել, դրեթէ առանց դէմ դնելու հնազանդեցան։ Թագաւորը իր ընտանիքովը Կապան բերդին մէջ փակուած, ինն ամիս պաշարուած մնաց։ Բայց յետոյ սովուց նեղանալով անձնատուր եղաւ և Եգիպտոս տարուեցաւ։ Ուր տեղ բանտ դրուեցաւ մինչև 1382։ Լեւոն իր գերութե-

նից, Գասթիլլեոյ Յովհաննէս թագաւորի օգնութեամբն ազատեցաւ, և Գահիրէից Սպանիա գնաց իր բարերարից շնորհակալ լինելու: Այն տեղ իր ասպիճանին վայել և իր թագաւորութեանց փոխարէն պատուով ընդունուեցաւ: Այն տեղայ երեք տարուց յետոյ Ֆրանսիա գնաց, այս տեղ էլ Կարոլոս Զ. նոյն պատուով ընդունեցաւ: Սուրբ Անտոնի պալատը, Սուրբ Դիոնիսիոս ում նրան տուուեցաւ մեծ թոշակով: Ֆրանսիոյ թագաւորը նմանապէս նրան խոստացաւ, որ երբ Անգղիոյ դէմ ունեցած պատերազմն կվերջացնէ, իրան հարկաւոր եղած միջոցները կտայ իր թագաւորութիւնը ձեռք բերելու: Լեւոն՝ Կարոլոս Զ-ի հետ ունեցած յաճախ խօսակցութեան մէջ, նրան այս երեւելի խօսքերն է ասել: «Թէ արեւելեան քրիստոնէից փրկութիւնը Ֆրանսիոյ և Անգղիոյ բարեկամութենից է կախեալ» Լեւոն Ֆրանսիոյ թագաւորին հաւանութիւնը խնդրեց և ստացաւ Անգղիա գնալու, և աշխատելու, թէ որ կարելի է երկու կողմանէ խաղաղութիւն անել: Անգղիացւոց ազգը մեծ համակրութեամբ ընդունեցաւ Լեւոնին և խորհրդարանը հաւան կենալով նրա առաջարկութեանցը, Բուլընիումը դեսպաններ յուղարկեց Ֆրանսիոյ դեսպաններուն հետ խաղաղութեան պայմանների վրայ խօսելու. Բայց բանակցութիւնները դադարեցան առանց մի խաղաղական հետեւանք ունենալու:

Լեւոն տեսնելով, որ իր յոյսը պարապ եղաւ էլ իր երկիրները ձեռք բերելը մոքիցը հանեց և իր կենացը մնացածը բարեպաշտութեամբ և Աստուածպաշտութեամբ անցկացնելու գործածեց, կրկին անգամ Սպանիա[1] գնաց, ուր տեղ կալուածներ ունէր և էն տեղայ էլն եկաւ ու Ֆրանսիոյ հողին

1 Ժիլ-Դաւիդ Դոնզալէզ-դ Աւիլա իր պատմութեան մէջ Լեւոնի համար ասում է, թէ երկար ժամանակ մնաց Մեկսիկում եւ իբրեւ Մատրիսի իշխան մի կարգադրութիւն սրաւ 1391-ին; Պարոն-Դը-Բուլարոլ նմանապէս երկու նամակ հրատարակած ունի Արագոնի թագաւոր Պետրոս Դ-ին, որոնք գրուած է 3 Սեպ. 3 Հոկ. 1380-ին, մինը Եգիպտոսի Սուլթանին եւ միւսը իր ծովակալին Լեւոն Զ-ի ազատութեան համար. Այս հատուածները թէեւ հետաքրքրական են Լեւոնի առանձին կեանքը ճանաչելու համար, սակայն ամենեին լոյս չեն տալ Հայաստանի պատմութեան վրայ:

վրայ մեռաւ : Լեւոն Փարիզ մեռաւ 1393 Նոյեմբեր 29-ին և Կեղեստինեան վանքումը թաղուեցաւ, ուր տեղաց Ցեղափոխութեան ժամանակ ոսկրները Սուրբ Դիոնիսիոսի թագաւորական գերեզմանոցը տարին : Բոլոր Փարիզ նրա թաղման վրայ մեծ պատիւներ տուաւ : Ժուվէնալ այսպէս է խօսում այս մասին : «Հայաստանի թագաւորը, որ երկար ժամանակ մնացել էր Ֆրանսիում, լաւ և բարի վարքով իշխան և պարկեշտ քրիստոնեայ էր, վախճանեցաւ և գերեզման դրուեցաւ սպիտակ հանդերձներով : Նրա թաղմանը դային իշխաններ և պարոններ և ժողովուրդ : Լեւոն կամ կարասիքի կողմանէ հարուստ էր, վասն զի իր դալիս շատ հարստութիւններ բերաւ հետը, որոնք չորս մասի բաժանեց : Մինն իր ունեցածը բնական որդւոյն տուաւ, միւսը մուրացկաններին, երրորդը իր մարդկանցն ու ազատաւորներին և չորրորդ մասը իր տանը տնտեսին և վերակացուին : Լեւոնի վրայ շատ ցաւեցան նրա բարի վարքին և անոյշ խօսքին համար» :

Լեւոն մեռնելիս, Անգղեոյ թագաւոր Ռիչարտոս Բ-ին, իր կտակագրատարը նշանակեց: Լուսինեանց Հայաստանի Ֆրանսիայի գերդաստանին ընկնելուց յետոյ, Կիպրոսի թագաւորները Հայաստանի թագաւորի անուն առին իրանց վրայ, որոնք մի դարու չափ կրեցին : Հինգհատասներորդ դարուն մէջ այս գերդաստանի ժառանգը Հայաստանի թագաւորութիւնը վերանորոգեցուց թաղուց : Յետոյ Լուսինեան ցեղից մի իշխանուհի Սաւոյայի մի դքսի հետ ամուսնանալով, Պիէմոնդի թագաւորները իրանց տիտղոսին վրայ Կիպրոսի, Երուսաղէմի և Հայաստանի թագաւորի անունն էլ աւելացրին : Մի քանի Ծովեզերեայ քաղաքներ, որք են Սելեւկիա, որոնք Լեւոն Բ. Ասպնջականաց տուաւ, ինչպէս նաև Անտիոքիան և Սիդոնն քաղաքներն էլ Լեւոն Ե. Հռոտոսի ասպետներուն շնորհեց և Կորիկոսն, Կիպրոսի թագաւոր Պետրոսին, մի քանի ժամանակ քրիստոնէից ձեռը մնացին, բայց հինգերորդ դարու վերջերումը նրանց ամէնքն էլ Խպրահիմ Պէյ անուն Քարամանը կոչուածն առաւ, որու սերնդի ձեռքից էլ Օսմանցիք առին, և այն ժամանակից սկսած Հայաստանը Թուրքաստանի մի գաւառ դառաւ :

Ի վերջոյ, այս երկիրը հետզհետէ Եգիպտացւոց, Թուրք-

մէններու և Թուրքերու տիրապետութեան տակ անցկենալով, ասպարէզ եղաւ տգիտութենից, մոլեռանդութենից և պատերազմներից յառաջ եկած ամէն տեսակ թշուառութեանց և աղէտքներու։ Վաթսունեհինգ քաղաքից և բերդից, որոնց անունը պատմութիւնը պահպանել է, որոնք ամէնքն էլ շատ քիչ ծաղկած, բազմամարդ և վաճառաշահ քաղաքներ էին Թուրքեան թագաւորութեան ժամանակ, հազիւ տասն կամ տասնուհինգ հատ մնացել է, մնացածներն ուրիշ բան չեն ընծայել մեզ, բայց միայն անուր աւերակներ[1]։

Հայք երկար ժամանակ Եգիպտացւոց, Պարսից Քուրդերու, Թաթարներու և Թիւրքմէններու և այլոց բռնութեան տակ հեծեցին։ Մի դար ամբողջ, 1233-ից մինչև 1340 մեծն Հայաստան մի ընդարձակ դաշտ եղաւ, ուր տեղ Զարմաղան ձեղալէտային և ուրիշ հիւսիսային Ասիոյ վանդալներն արիւնահեղ պատերազմներ էին անում։ Թիմուրլենկ 1387-ին վանն առաւ և նրա սրածայր սարիցն ի վեր բնակիչները գլխից։ Սեբաստիան առաւ, որուն Հայ զօրքերը կենդանի կենդանի թաղել տուաւ։ Իակենտէր-Բիւրտը Շահ Արմէն ասուլեցաւ և Հայաստանի հոգն արիւնով շաղեց։ Սուլթան Մէհէմմէտ Բ. 1473-ին Սելիմ Ա. 1514-ին և Մուրատ 1575-ին շատ անգամ Հայաստան մտան և սոսկալի պատերազմներով Պարսից հետ իրարու ձեռից Հայաստանը քաշքշեցին։ Սոսկալի սովեր, ահ-

1 Ամուսոկ, այս չրջանիս տարեգիր-Սմբատին տուած ցուցակը Հայաստանի քաղաքներուն և բերդերուն։ Սիս, Տարսոն, Ատանա, Անարզարբա, Միսիս կամ Մոպսուէստիա, Այաս։ Հռոմկլայ։ Բարձրբերդ, Լամբրոն, Ճէրտուս, Ճնքեր, Բաչերի, Համա, Սարանտիկեար, Հարուն։ Սմանքալ։ Հաճին։ Անզուզուս, Թորանքա, Բէրզուզ, Անէ, Գուտ, Փորնուս, Կապան, Հանճ, Խոտիկ, Մաղոտ-Խաչ, Ամուտ, Թիլ, Թէլբաս, Վանէր, Գուպէտար, Մոլէսէն, Բուհլիքս, Սուլա, Պապարոն, Բերիկ, Պէրոկան, Սինա, Ատարոս, Վորկիս, Լաղրատ, Ճամանկա, Գամոս, Անամոր, Նոր-Բերդ, Անտուլ, Գուպա, Մաղաս-Սիկ, Մանդղաթ, Ալար, Լակրատէն, Աղոլ, Կոտրատ, Մոնթաղ, Գոչ, Բէհեղնի, Ճէլքնոց։ Գուսով, Աչնորտ, Մանէլ, Պէնակ, Կիրոն, Դէրէնտէ։ Աբլատ, Արարիսոս, Կոկան, Մարաչ, (հներից Գերմանիկոս) Խոսոս, Մալլոս, Կարս, Կարիկոս, Սեբեվկիա, Էրմէնէք, Վահկայ, Ուլնի, (այսօր Զէյթուն) Անթապ։ Անտիոքիա, Սիղինոն, եւ ուրիշներ։

ռելի կոտորածներ, քանդումներ և կործանումներն դրոշմուած յաղթողի և յաղթվողի ճանապարհների վրայ: Շահ Աբբաս Արպատականի մէջ Թուրքերու ընթացքին դէմն առնելու համար, մի սոսկալի խորհուրդ յղացաւ, այն է Երասխ գետի դաշտը մի ընդարձակ անապատ շինել, և արաւ էլ: Երևան, Նախիջևան Օրտուպատ, Աղուլիս, Ջուղա բաղմամարդ և վաճառաշահ քաղաքները հարիւրաւոր դիւղերով և աւաններով, 1604-ին կըրակի տուուեցան: Պարսից Շահի անգութ հրամանովը, նրանց դաշտերը, այգիները, արտերը բոլորն էլ կործանուեցան քանդուեցան և 25,000 Հայ ընտանիք բռնագատուեցան իրանց բոյնը թողելու և գնալու Սպահանը, Շիրազը և Համադանը Լարիստանն՝ ու Ադրբանիստանն բաղմացնելու, ուր տեղաց այս գաղթականները արևելեան Հնդկաստան, Չինաստան, Մալակայի կղզին, Սումատրա և Յաւա կղզիները տարածուեցան:

Տասնուեօթներորդ դարու սկզբումը Հայաստան Պարսկաստանի և Տաճկաստանի մէջ բաժանուեցաւ: Արփայ-Չայը երկու սերուերեանց սահմանն եղաւ: Ռուսաստանն տասնեւութերորդ դարու վերջերը, կամաց կամաց Կովկասից անցկացաւ քշեց փոքր առ փոքր Պարսիկներին և Թուրքերին և մեծին Հայաստանի բերրի նահանգներու[1] վրայ տիրեց, Գանձակի (որ Ռաներրը Եղիսաբեդոբոլ անուանեցին), Նուխիի, Շուշիի, Ախլցխայի, Կումրիի, (Ռաներից Աղէքսանդրապոլ), Երևանին, Օրտուպատին, Աղուլիսին, նրանց 1,250,000 բնակիչներովը, որոնց հինգ հարիւր հազարը Հայք են:

Պիտի շարունակուի.

Գաղդիականէն թարգմանուած.

1 Գուգարք, Ուտի, Արցախ, Պայտակարան Սիւնիք, նահանգներն ու Արարատ՝ վասպուրական՝ և ցայց նահանգներուն էլ մեծ մասը:

ԽՄԲԱԳԻՐ ՄԱՐԿՈՍ ԱՂԱԲԷԳԵԱՆ·

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԷՆՖԻԱՃԵԱՆՑ

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ. ТИФЛИСЪ, 30 Іюля, 1863 г.